

ՍՈՒՐԻԱ - ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ

Սուրիա եւ Երրոպական Միութիւնը ձեռնարկած են բանակցութիւններու նոր փուլի մը՝ առեւտուրի եւ քաղաքական գործակցութեան համար, յայտնեց Ե. Միութեան պատուիրակութիւնը, որ Դամասկոս կը գտնուի:

Պատուիրակութեան քանքերը ըսաւ, որ բանակցութիւններու տասներորդ փուլը պիտի արժարժէ մարդկային իրաւացի հարցերը, արդարադատութիւնը, կապիտալիզմը ու իրաւունքներու եւ անարդարութեան դէմ պայքարը: Բանակցութիւններուն պիտի արժարժուի նաեւ ազատ առեւտուրի գոտի մը հաստատելու կարելիութիւնը:

Սուրիա - Ե. Միութիւն բանակցութիւնները սկսած են 1988ին. կը նախատեսուի, որ մինչեւ 2010 հաստատուի ազատ առեւտուրի գոտին: (ԱՖՓ)

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՅ ՖՐԱՆՍԱԽՕՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԸԱՐՑԵՐՈՒ 29ԴԳ ՎԵՐԱԺՈՂՈՎԻՆ ԼԻԲԱՆԱՆ 2009ԻՆ ՊԻՏԻ ՀԻՐԸՆԿԱԼԵ ԽԱՂԵՐԸ



նան 2009ին:

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէան երէկ Պէյրութի «Մեթրոփոլիթըն» պանդոկին մէջ կատարեց պաշտօնական բացումը Ֆրանսասօս Երկիրներու կազմակերպութեան անդամ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարներու 29ԴԳ վեճակողական, որուն ընթացքին ան հանդէս եկաւ խօսքով մը, ուր նշեց համագործակցութեան անհրաժեշտութիւնը եւ վեր առաւ այս կազմակերպութեան ճամբով երիտասարդութիւնը առողջ պահելու առաքելութիւնը:

ՆԱԽՈՐԴՈՂ ՕՐԵՐՈՒ ԸՆԴԴՊՈՒՄՆԵՐԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէան 29ԴԳ վեճակողական խորհրդի, 12 Մարտ 2003ին, հանդիպում մը ունեցաւ ուսման հիմնական դասարաններու պաշտօնակիրներու հետ, որ կը գտնուի Լիբանան՝ մասնակցելու վի բոլոր մասնակիցները:

Շար.՝ էջ 9

Ներկայ էր նաեւ մշակույթի նախարար Դասուս Մալամէ, որ իր խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց եւ ըսաւ, որ Լիբանան արժանի է հրաշքերու փրկանքին եւ Լիբանան արժանի է հրաշքերու փրկանքին եւ Լիբանան արժանի է հրաշքերու փրկանքին:

ՆԱԽԿԻՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ՏՈՔԹ. ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՄԱՐՄԻՆԸ ՅԱՆՁՆՈՒԵՅԱԻ ՀՈՂԻՆ

Լիբանանի խորհրդարանի նախկին անդամ, Հայկական Երեսփոխանական Պրոքիւրէի կարգաւորման անդամ տոքթ. Անդրանիկ Մանուկեանի յուղարկուելու 13 Մարտին, Հայ Աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրանսիայի Շրպայեթի Հայ Աւետարանական գերեզմանատուն:

Մանուկեանի անձին արժանիքները, ընդգծեց հանգուցեալին անշահախնդիր ծանոթներու շարքին, շեշտելով Հայկական Երեսփոխանական Պրոքիւրէի անդամ արժանիքները, որոնք զինքը գիտակցութիւնը:



ՅԱԽԱԿՑԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ Հ. Յ. Ղ. ՍԱՐԴԱՐԱՊՈՍ ԱՎՈՒՄԲԻՆ ՄԷՋ

Երէկ՝ Ուրբաթ, 14 Մարտ 2003, Հ. Յ. Ղ. Սարգսյանի անուան հիմնադրամի կողմէն, Հ. Յ. Ղ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն եւ Հայկական Երեսփոխանական Կոմիտէն շնորհակալութիւններ արտայայտեցին Սարգսյանի անձին արժանիքները, որոնք զինքը գիտակցութիւնը:

Շար.՝ էջ 10

Յուղարկուելու 13 Մարտին, Հայ Աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրանսիայի Շրպայեթի Հայ Աւետարանական գերեզմանատուն:

Յանուն հանրայեանութեան նախադասի հայտարար Սեպուհ Յովհաննէան յետ մահու Մայրիւնէրու Շրանշանով պարգեւատրեց հանգուցեալը: Պաշտամունքի արարողութեան նախագահ Լաւոնտը կը ներկայացներ նախարար Յովհաննէան, խորհրդարանի նախագահ Նեպիի Պրոքիւրէի՝ երեսփոխան Ատնան Արաքժի, իսկ վարչապետ Ռաֆիք Հարիրի՝ նախարար Պասէլ Ճիլիան: Ներկայ էին խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի, նախկին վարչապետ Ռաշիտ Սոլի, նախարար Մարուան Համաւտէ, երեսփոխաններ, կուսակցութեանց եւ միութիւններու ներկայացուցիչներ, հոգեւորականներ, Հայաստանի դեսպանը եւ մեծ թիւով սգակիրներ:

ԻՐԱԲԵՆ ՏԱԳՆԱՊ

ՈՒԱՇԻՆԿԱԾՆ ՄԵՐԺԵՑ ԶԻԼԻԻ ՄԵԿ ԱՌԱՋԱՐԿԸ՝ ՊԱՅՄԱՆԱԺԱՍԸ ԵՐԵՔ ՇԱՐԱԹՈՎ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԳԾՈՎ

ՄԱԿԻ Ապահովութեան Խորհուրդին մէջ թեւ ճիշդ կը շարունակուին յանգելու համար բոլորին կողմէ ընդունելի լուծումի մը, որ կրնայ վերջ տալ իրաքի տագնապին պատճառով ծագած դիւանագիտական տարակարծութիւններուն, սակայն ապարդիւն: Ուաշինթըն մերժեց Չիլիի մէջ առաջարկը՝ երեք շաբաթով երկարաձգել իրաքի տրուած պայմանաժամը: Այլ լուրերու համաձայն, բանակցութիւնները երէկ գիշեր անելի մատնուած են:

ՄԱԿԻ մէջ Հինգշաբթի օր տեղի ունեցած բանակցութիւններու մարտնչական ինտեր չլազողեցաւ համոզել Ռուսիան եւ Ֆրանսան, որպէսզի ընդունին ամերիկեւրիտանական առաջարկը: Ապահովութեան Խորհուրդի ոչ մնալուն վեց անդամները, որոնք ցարդ որոշում չեն տուած, թէ ո՞ր ճակատին պարտիզ կը կանգնին, կը պատրաստուին ներկայացնելու նոր բանաձեւի մը առաջարկը, որ միջին ելք մը պիտի ունենայ: ՄԱԿԻ մէջ Ֆրանսայի դեսպանը յայտնեց, որ վեց երկիրները շուտով պիտի ներկայացնեն առաջարկը:

Մինչ Ֆրանսա եւ Ռուսիա անդրդուելի կը մնան իրենց կեցուածքին վրայ, Միացեալ Նահանգներու նախագահ Ջորժ Պուշ, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Դեյլ եւ Ապահով վարչապետ Նուէ Մարիա Անար կը պատրաստուին վեճակողով մը ունենալու վաղը՝ համակարգելու համար իրենց ճիշդը:

Բրիտանիա կը փորձէ բարեփոխել բանաձեւը, որ ցարդ կը մերժուի Ֆրանսայի եւ Ռուսիոյ կողմէ: Բրիտանիոյ դեսպանը՝ ձեռնմի կրիստոք ըսաւ, որ բանակցութիւններն ու խորհրդակցութիւնները պիտի շարունակուին: Անոր

Շար.՝ էջ 3

ՆԱԽԱԳԱՅ ԲՈՉԱՐԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ԲԱՒԱՐԱՐ ԵՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի շնորհը օր տուաւ մամլոյ ասուլիս մը՝ Հայաստանի նախագահական ընտրութիւններուն մասին: Քոչարեանի կարծիքով՝ ընտրութիւններու արդիւնքները բարար են, թէւ կարելի է «լաւ աշխատելու պարագային աւելի բարձր ցուցանիշներ ունենալ»:

Քոչարեան նշեց, որ առաջին փուլէն իր ջրնտրուելուն զիջուող պատճառով իրեն զօրակցող պահանջարկի աւելումը ինքնավստահութիւնն էր, որուն հետեւանքով շատեր չմասնակցեցան քուէարկութեան: Երկրորդ, իրեն աջակցող քաղաքական ուժերուն միջեւ համակարգումը բարար չէր: «Շատեր աւելի կը մտածէին Մայիս 25ի ընտրութիւններուն մասին», նշեց Քոչարեան:

Ռոպէրթ Քոչարեան դիտել տուաւ, որ բողոքի յայտարարումները իրաւական ճանապարհին է, սակայն ընդդիմութիւնը այս խնդիրը կը տեսնուի թաղաքական դաշտ: Քոչարեան ընդգծեց, որ բողոքներ եղած են ընտրական 123 կեդրոններու մէջ, ստուգուած է անոնցմէ 45ը եւ յուրջ փոփոխութիւն չէ արձանագրուած: Ռոպէրթ Քոչարեանի կարծիքով 1998ի ընտրութիւններուն քաղաքականութեամբ 2003ի ընտրութիւնները մեծ պարգացում կարելի է նկատել:

Շար.՝ էջ 9

ՆԱԳԳԱՆ ԵՄՆԻ ՀԱՐՅՈՎ

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԵՂԱԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ

Հայաստանի Հանրային Պատկերասփիւռի եւ Ձայնասփիւռի ընկերութեան խորհուրդի նախագահ Տիգրան Նաղապետի սպանութեան գծով Հետապնդումի տակ գտնուող Գրիգոր Պետրոսեան Մարտ 13ին անձնատուր եղած է ոստիկանութեան: Պետրոսեան, ծանօթ «Ազգըր» անունով, 1960ի ծնունդ է եւ բնակիչ՝ Արարատ մարզի Աշոտաւան գիւղի:

Պետրոսեանի ցուցմունքներուն հիման վրայ ձերբակալուած է նաեւ Հետապնդումի ենթակայ Յովհաննէս Յարութիւնեանի հօրաբերը որդին՝ Նաչիկ Ահաբեկեան:

Նշենք, որ նախապէս ձերբակալուած էին վեց անձեր՝ սպանութիւնը ուղղակի կատարողները եւ յանցագործ խմբակի մեղսակիցները:

ԽԱԹԵՄԻ ԵՒ ԱՅԼ ԱՆՁՆԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Նախագահ վերընտրութեան աւիթով, Ռոպէրթ Քոչարեան կը շարունակէ շնորհաւորութիւններ ասանալ պաշտօնակիցներէ:

Նախագահ Քոչարեանին շնորհաւորական ուղերձ մը յղած է իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի: Իրանի նախագահը յոյս յայտնած է, որ երկու երկիրներու բարեկամական յարաբերութիւնները յառաջիկայ ժամանակաշրջանին աւելի եւս կը զարգանան բոլոր բնագաւառներէն ներս՝ ի շահ երկու երկիրներու ժողովուրդներու բարօրութեան եւ շրջանային քաղաքացիական ու կայունութեան ամրապնդման:

Նախագահ Քոչարեանը շնորհաւորած են նաեւ Լեւոն Տեր-Սեդրակեանի կողմէ շնորհակալական խօսքերով նախագահ Արեւիկայի Կոնստանտին Կոնստանտինի:

Իր կարգին, Երրոպական Միութեան Խորհուրդի ընդհանուր քարտուղար Սալիէ Սոլանա նախագահ Քոչարեանի ուղղուած շնորհաւորական նամակի մը մէջ յաղորդութիւն մաղթած է՝ իր պաշտօնակցութեան երկրորդ շրջանին եւ Հայաստանի զարգացման եւ բարգաւաճման յոյսով:

ՎԱՀԻ ԳԱՐԻԻԷԼԵԱՆ՝ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Մարտ 13ին ստորագրած է հրամանագիր մը, որուն հիման վրայ Վահէ Գարիբեան նշանակուած է Բրիտանիոյ մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան: Գարիբեան նախապէս կը վարէր Հայաստանի նախագահի բանբերի պաշտօնը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՅՍՈՐ՝ ՇԱՐԱԹ, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 8:30ԻՆ
ՎԱՂԸ՝ ԿԻՐԱԿԻ, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7:00ԻՆ

ՀԱԼԵՊԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Ն. ԱՐԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱԳԻՂԻ

«ՍԱՐԳԱՐԱՊՈՍ» ՊԱՐԱՆՈՒՄԸ

«ՅԱԿՈՔ ԵՐ ՄԵԼՔՈՒՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱԿՆԻ ՄԷՋ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՅՍՈՐ՝ ՇԱՐԱԹ, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 8:30ԻՆ
ՎԱՂԸ՝ ԿԻՐԱԿԻ, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7:00ԻՆ

ՀԱԼԵՊԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Ն. ԱՐԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱԳԻՂԻ

«ՍԱՐԳԱՐԱՊՈՍ» ՊԱՐԱՆՈՒՄԸ

«ՅԱԿՈՔ ԵՐ ՄԵԼՔՈՒՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱԿՆԻ ՄԷՋ:

ԵԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐԶԻ ԱՊԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՄԱՆ ԹՂԹԱԾՐԱՐԻ ԲՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԵԾ ԹԱՓՈՂ

Ապագետականացման գերագոյն խորհուրդը, գլխավորութեամբ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի, երկն Բորայի մէջ գումարեց ժողով մը, որուն ընթացքին քննարկեց ելեկտրականութեան մարզի ապագետականացման թղթածրարը:

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտուն յոյս յայտնեց, որ մինչեւ յառաջիկայ Յունիս ելեկտրականութեան մարզի ապագետականացման թղթածրարը կը հասնի իր վերջնական լուծումին, հաւաստելով, որ տարբեր ընկերութիւններու կողմէ պատրաստակամութիւն ցուցաբերած է եւ մրցակցութիւնը ուժեղ է:

Պալտուն ըսաւ, որ աճուող մասնակցող կողմերը ներկայ են, նշելով նաեւ, թէ առաջին հանգրուանին ելեկտրականութեան մարզի 40 առ հարիւրը միայն պիտի ապագետականացուի:

Պալտուն ընդգծեց, որ ժողովի ընթացքին համաձայնութիւն գոյացած է աճուող պայմաններուն շուրջ:

Պալտուն նշեց, որ Հետաքրքրութիւն ցուցաբերող ընկերութիւններուն 45 օրուան պայմանագրով տրուած է ներկայացնելու առաջարկներ: Ան աւելցուց, որ մինչեւ յառաջիկայ Ապրիլ լիբանանեան կառավարութիւնը յստակ պէտք է ունենայ ելեկտրականութեան մարզի ապագետականացումով Հետաքրքրուած ընկերութիւններուն ցանկը: Պալտուն շեշտեց, որ արդէն իսկ 19 երրօրական ընկերութիւններ Հետաքրքրութիւն ցուցաբերած են:

Վարչապետ Հարիրիի եւ Պալտունի կողքին ժողովին ներկայ գտնուեցան ելեմուտքի նախարար Յուսէն Սիւրի, աշխատանքի նախարար Ալի Բանաս, առեւտուրի եւ տնտեսութեան նախարար Պասէլ Յիլէհան եւ ապագետականացման գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Ղազի Եուսէֆ:

ՄԱՀԱԶԴ

Լիբանանահայ Բժշկական Միութիւնը կը գումարէ իր հիմնադիրներէն եւ երկարամեայ անդամներէն, նախկին ատենապետ՝

ՏՈՔԹ. ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 19 Մարտ 2003ին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ալիա Մանուկեան Տէր եւ տիկին տղթ. Արսէն եւ Ելիզապէթ Մանուկեան եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Վահէ եւ Լենա Մանուկեան եւ զաւակուներ

Տր եւ տիկին Տիգրան եւ Վիվիան Յապրիբաթորեան եւ զաւակուներ

Օրդ. Ծովակ Մանուկեան Տիար Գարեգին Բարձար եւ համայն ազգականներ կը գումարէ իրենց ամուսնոյն, հօր եւ եղբոր:

ՏՈՔԹ. ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

(Նախկին Պետական Երեսփոխան, Ծնեալ՝ Խարբերդ, 1910ին)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 10 Մարտ 2003ին երեկոյան ժամը 7:00ին, Պէյրութի Ամերիկեան հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան պաշտամունքը կատարուեցաւ Հինգշաբթի, 13 Մարտ կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հայ Աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ, «Մեքսիք» փողոց, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Յըրն Շրպպէի Հայ Աւետարանական գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Շաբաթ 15 Մարտին, Հայ Աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ, ժամը 10:00էն 12:00 եւ կէսօրէ ետք 3:00էն 6:00:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել բարեխիղացեալ հաստատութիւններու:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մելինէ Թաթեան Տիար Վահէ Եագուպեան Տէր եւ տիկին Յակոբ Թօփաքեան եւ ընտանիք

Տէր եւ տիկին տղթ. Զանիկ Թօփաքեան եւ ընտանիք

Տիկին Անայիս Բրիգոր Պետոյեան եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Ռիչարտ եւ Նանի Հալաբեան

Տէր եւ տիկին Ժորժ եւ Արփի Ուսուած

Տէր եւ տիկին Ալեքս եւ Ռիթա Գուրգէլեան եւ ընտանիք

Պալթայեան ընտանիք Աշեան ընտանիք Պալեան ընտանիք

եւ համայն ազգականներ կը գումարէ իրենց ամուսնոյն եւ հարազատին՝

ԿԱՐՊԻՍ ԹԱՔԵԱՆԻ (ՏՈՆԵԱՎ՝ Կեսարիա, 1912ին)

մահը, որ պատահեցաւ Զորեքշաբթի, 12 Մարտ 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 13 Մարտ, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Յըրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նահրի Մթք, «Հըրմէ» փողոց, «Լեւոն Շանթ» շէնք, գրատուն Մատիի դիմաց, Ա. յարկ, Հինգշաբթի 13, Ուրբաթ 14 եւ Շաբաթ 15 Մարտին:


ԱՅՍՕՐ ՎԱՆԱՅ ԶԱՅՆԷՆ
Այսօր կեսօրուան ժամը 12:30ի լուրերէն անմիջապէս ետք. Վանայ Զայնէն ունկրկողեցէք Հ.Յ.Դ. Լիբանանի Հայ Դպրի Մարմինին պարտաւարձ

«ՀԱՅ ԴԱՏԸ ԱՅՍՕՐ»

յայտագիրը:

- Շարքուն մարտունք:
- Լուրեր Հայ Դպրի մասին
- Պատմական ակնարկ անցեալէն այսօր
- Հարցազրոյց Ուաշինկթընի Հայ Դպրի գրասենեակի արտաքին յարաբերութեան պատասխանատու ԸՆԿ. ԵՂՍԱԲԵԹ ՉՈՒԼՃԵԱՆԻ հետ:

Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՍԻ ՄԱՐՄԻՆԻ ԱՆՊԱՂԱՅՈՒՄԻՆ ԳՐԱՅԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՅԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՊԱՂԱՅՈՒՄԻ ՎԱՆԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱՆԷՆՆԵՐ



կարելի է ստանալ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ «Շաղկոյեան» կեդրոն: Սակ իւրաքանչիւր 5000 Լ.Ո.

ՄՕՏ ՕՐԷՆ
ՀԱՅ ԴԱՍԻ ՊՐԱՎ ԹԻՒ 1
Հրատարակութիւն
Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՍԻ ՄԱՐՄԻՆԻ

«ԱՂՂԱԿ» Ի ՖՈՆԿՏԻ

- Տոքթ. Անդրանիկ Մանուկեանի մահուան առիթով, Տր եւ տիկին մտք Գրիգոր Եպիղաթեան 500 Լ. Ո.
- Տր եւ տիկին Մաթիկ Եպիղաթեան 500 Լ. Ո.
- Տր եւ տիկին Պողոս եւ Զրիստին Վանլեանի առջինն մանչ զաւակով մը բախտաւորութիւն ուրախ առիթով, Տր եւ տիկին Աբրահամ Վանլեան 50,000 Լ. Ո.

Հ. Յ. Դ. ՍԱՐԴԱՐԱՊՍ ԿՈՍԻՏԵԻ ԴԱՏԻՆԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՆՁԱԿՈՒՄԻՆ ԱՆՍԱԶՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՆ-ԶՐՈՅՑ

Նիւթ՝

«ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԱՌՈՂՋԱՊԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ»

- * Լ.Օ.ԽԱԶ
- * Երեսփոխանական Գրասենեակ
- * Ա.Յ.Հ.Ի.Լ.

Տեղի կ'ունենայ Զորեքշաբթի, 19 Մարտ 2003, Երեկոյեան ժամը 8:00ին, Լ. եւ Ս. Յակոբեան քուէի սրահին մէջ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սիրարփի Արսէնեան Տէր եւ տիկին տղթ. Էստուր եւ Սոնա Աղամբան եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Ճորճ եւ Նորա Բարձրի եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Ժաք եւ Արտա Էքմէճեան եւ զաւակուներ

Արսէնեան ընտանիք Գրազիրեան ընտանիք Աղամբան ընտանիք Բարձրի ընտանիք Էքմէճեան ընտանիք Բացախեան ընտանիք Պալեան ընտանիք Կիւլէմէրեան ընտանիք Գրիգորեան ընտանիք

եւ համայն ազգականներ կը գումարէ իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, անեղծի, բեռնի եւ հարազատին՝

ԴՈԿՏ. ՆՈՒՊԱՐ ՅԱԿՈԲ ԱՐՍԷՆԵԱՆԻ (ՏՈՆԵԱՎ՝ Ատապազար, 1912ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 6 Մարտ 2003ին, Երեկոյեան ժամը մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 9 Մարտ 2003ին, Երեկոյեան ժամը մէջ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին զատար տիկին Արտա Էքմէճեանի բնակարանը, Գորայի-մ, «Թալար» շէնք, Երկ յարկ, Շաբաթ 15 եւ Կիրակի 16 Մարտին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• ԽՈՐՀՐԳՐԱՄԻ Նախագահ Սեպիի Պրորի երէկ Մասիէի մէջ կատարած իր յայտարարութիւններուն մէջ շեշտեց, որ Իրաքի դէմ պատերազմին գծով արաբական քաղաքական յստակ կեցուածքի մը չգոյութիւնը կը նպաստէ պատերազմի տրամաբանութեան: Ան աւելցուց, որ անկարելի է արիւնահեղութեամբ ժողովրդավարութիւն կերտել:

• ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ Նախարար Ղազի Արիտի բրիտանական «Պի. Պի. Սի.» կայանին տուած իր հարցազրոյցին մէջ վերահաստատեց, որ Միացեալ Նահանգներ կառուցած կը մնան Իրաքի դէմ պատերազմի ընտրանքին, երբ ամբողջ աշխարհը կը մերժէ պատերազմը:

Արիտի աւելցուց նաեւ, որ Շարմէլ Շէյխի մէջ գումարուած Արաբական Լիկայի վեհաժողովին բնագոյնում Իսլամական զորաւորութիւնները աշխատանքներ չէին ընդգրկէր Պաշտատ այցելութիւն մը:

• ՊԵՏԱԿԱՆ Նախարար Պարա Մըրիէմ երէկ Գամակուսէն վերադարձաւ Լիբանան: Գամակուսի մէջ ան հանդիպում մը ունեցաւ Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ հատուածի հետ: Հանդիպումին շեշտուած էին Լիբանան-Սուրիա միացեալ կեցումը, շրջանին սպառնացող վտանգներուն լոյսին տակ, եւ արժեւորուած էր անցեալ շաբաթ վերջին տեղի ունեցած Պապուս - Գամակուս պատմական անսահման քայլարշար իբրեւ վորակութիւն նախագահներ զօր. Էմիլ Լահուսի եւ Պաշար Ասատի կեցումը:

ԶՆՈՐԱԿԱԼԻՔ

• Աբրահամեան ընտանք շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, հեռաձայնով եւ նուիրատուութեամբ մասնակցեցան իրենց հարազատին՝ ՀԱՅՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ մահուան սուգին:

ԲԱՆՏԱՌՈՒԹԵԱՆ

Տր եւ տիկին Պողոս եւ Զրիստին Վանլեան բախտաւորուած են առջինն մանչ զաւակով մը

ՃՈՒԼԻԸՆ - ԱԲՐԱՀԱՍ

13 Մարտ 2003 Պէյրութ

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» Ի ԱՅՍՕՐՈՒՄ ԶԱՅՆԱԳԻՐԵՐԸ

- ժամը 8:00 Ելեք ԽՈՂԱՅՐ
- ժամը 8:45 Աստղեր
- ժամը 12:00 «Մարտի պահեցք հայերէնը»
- Շահանդուխտ
- ժամը 12:35 Եայ Կալոյ այսօր
- ժամը 3:00 Մանկական աշխարհ
- ժամը 4:00 Եարցազրոյց՝ տիկին Լուսին Մամուլեանի հետ՝ հայկական տարագրութեան մասին
- ժամը 5:00 Գուսան
- ժամը 7:30 Ելեք ԽՈՂԱՅՐ (Կրկնա.)

ՏԵՍԱԿԵՏ

ԳԻՏԱԿԻՑ ԵՒ ՃԻՇԳ ԸՆՏՈՒԹԻՒՆ

Տարբեր բացատրութիւններ կարելի է տալ եւ բազմաթիւ անկիւններէ մտնելով ու վերլուծել Հայաստանի նախագահական ընտրութիւններու հոլովոյթին մէջ արձանագրուած բոլորիս ծանօթ իրադարձութիւնները: Անկախաբար իշխանատէնչութեան գործօնէն, բնականաբար կան ներքին եւ արտաքին շատ մը պղպղակներ, որոնք սակայն կշիռքի եթէ դնենք, արտաքինը այս պարագային կը գերակշռէ: Բաւարար է ընդգծել քանի մը ուշագրաւ երեւոյթներ, ապա անոնց միջեւ գծել պուզահեռներ՝ հաստատելու համար ըսուածը:

Հայաստանի ընտրութիւններուն, ընդդիմադիր ճակատին բարձրացուցած աղմուկը ինչ կը վերաբերի խախտումներու, ինչպէս ներառուած մեր կեանքին մէջ, նոյնպէս արտաքին աշխարհին եւ յատկապէս մեծ ուժերուն մօտ եւս ստեղծեց յստակ երկուութիւն:

Այսպէս, ԱՊՀի անդամ երկիրներու դէտեքոր, զորս կը զիջատէր ռուս Եւրոպ Եւրոպ, ընտրութիւնները նկատեցին հարիւր տոկոս թափանցիկ եւ մաքուր: Ասոր դիմաց, ԵԱՀԿի անդամ երկիրներու դէտեքոր խմբակը, զոր կը զիջատէր ամերիկացի Փիթըր Այբըր, մինչեւ օրս կ'աղաղակէ կոպիտ խախտումներու մասին եւ կը յայտնէ մեծ յուսախաբութիւն: Իսկ Եւրոպական խորհուրդի դէտեքոր խմբակը, զոր կը զիջատէր Ռաւրլ Ճոնսթըն, օրին շատ աւելի մեղմ ակնարկութիւններ կը կատարէր՝ որոշ խախտումներ մատնանշելով, աւելցնելով սակայն, թէ այդ խախտումները երբեք չէին կրնար ազդել արդիւնքներուն վրայ:

Շարունակեք պարզացնել միեւնոյն տրամաբանութիւնը:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին ընտրութեան յաջորդ օրն իսկ փութաց շնորհատելու նախագահ Ռուպիք Քոչարեանը, մինչ Ուաշինկթըն իր արտաքին գործոց նախարարութեան խողովակով ոչ միայն չընտրուեց, այլեւ իր արտաքին գործոց նախարարութեան խողովակով յուսախաբութիւն արտայայտեց կոպիտ խախտումներու ի յուր: Աւելի'ն: Այն պահուն, երբ ընդդիմադիր ճակատի հետեւորդներ բողոքի ցոյցով հանդէս կու գային Երեւանի մէջ ռուսական դեսպանատան դիմաց, յաջորդ օրը, դեսպան Անաթոլի Տրիտըրով կը հակապղծէր՝ այցելելով նախագահ Քոչարեանի եւ շնորհատելով վայն:

Այս բոլորը պուզահեռութիւններ չեն անշուշտ: Երբ մէկ կողմէ ռուսական դրոշմ կրող ԱՊՀ վարդագոյն կը դիտէ (կամ կ'ուզէ դիտել) ամէն բան, իսկ միւս կողմէ, ԵԱՀԿ, որ յայտնապէս ամերիկեան պղծեցութեան տակ է՝ սեւ կ'ուզէ տեսնել ամէն ինչ, կը նշանակէ, թէ տեղ մը սխալ բան մը կայ անպայման: Աւելի'ն: Եթէ բաղդատենք Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբերին՝ Ռիչարտ Պաուլսթրի եւ ԵԱՀԿի դէտեքոր պետ Այբըրի յայտարարութիւնները, անմիջապէս պիտի նշմարենք, որ թէ՛ ռոճով, թէ՛ ձեւով, թէ՛ խորքով անոնք յար եւ նման են...

Յատկապէս այս օրերուն, երբ աշխարհը դարձեալ կը գտնուի երկբեւեռացման հոլովոյթի մէջ, երբ իրաքեան տագնապով բացայայտուած աշխարհաքաղաքական նոր համակարգ մը կ'ուրուագծուի քսանմէկերորդ դարուն, բնականաբար մեզի՝ Հայաստանի նման փոքր երկիրները, որոնք բազմաթիւ են, պիտի դառնան ուշադրութեան առարկայ եւ առ այդ կոռուխանձոր՝ բեւեռներուն միջեւ:

Այլ խօսքով՝ պատմութիւնն է, որ ինքզինք կը կրկնէ: Այսինքն՝ Հայաստան անգամ մը եւս կը գտնուի այս կամ այն ընտրանքին առջեւ: Եւ բնական է, որ բեւեռներէն մին վարդագոյն դիտէ մեզ, իսկ միւսը՝ սեւ: Կովկասեան շրջանին մէջ կարելի չէ ձեւաւորել (չէ պղծ) դիտելի: Ահա թէ ինչն է այսպէս հակաքաղաքական կը կատարուի անդրատլանտեան բեւեռէն, որ ընդդիմադիր ճակատին ետին անցնելով ու վանտնք հրահրելով կը յաջողի հասնիլ իր նպատակին՝ քառաձայն շեփոքահարել խախտումները: Հակառուս եւ հակապալ Անգարայի ու Պաքիստանի մեծ հովանաւոր Ուաշինկթընի այս կեցումը պարմանալի չէ անշուշտ մասնաւոր իրաքեան վերիվայրումներու թոհուրոհին մէջ: քաղաքական այս արշաւով Հայաստանի վրայ ճնշելու լաւ ու ոչ ծախսալից միջոց մըն է այս մէկը (որուն առիթը ի դէպ մեր հայրենակիցները կու տան), որ շատ հաւանաբար պիտի շարունակուի տակաւին երկու երեք ամիս ալ, մինչեւ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու ատար: Այսինքն՝ միեւնոյն յանկերգը լսելու պատրաստ պետք է ըլլալ ու մասնաւոր չձայնարանալ...

Հարցում. արդեօք դարձեալ կը դիմագրուենք արեւելումի հարց, դժուարութիւն:

ՀՐԱՅ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
Շաբ.ը՝ էջ 3

Գրական Հե

ՄԵԾ ՈՒ ՄԱՔՈՒՐ ՄԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐԿՆԱԿ ԿՈՐՈՒՍՏ



«... Այստեղ ահա հասկանալի էր դառնում, որ մարդու բարեկրթությունը կրթությունը չէ, քաղաքը չէ, տաղա՛նդը չէ, այլ՝ յատկանի՛շ է: Եւ որ վեհանձնությունը նոյնպէս յատկանի՛շ է: Մարդությունը եւ: Եւ բարեկրթությունը՝ նոյնպէս:»

ԱՆԳՐԷՅ ԲԻՏՈՎ

Տաղանդաւոր գրագէտին անժամանակ կորուստին առիթով բուրբին յանձնուած սերնդակից եւ ոչ սերնդակից գրողներու, արուեստագէտներու եւ նոյնիսկ պաշտօնական ցաւակցագիրներուն մէջ, «Երկրի շիրիմ»-ին տրոփունքները իր ողջ էութեամբ ապրած իրաւ գրողին մահով գոյացած գրական պարային ծանրութեան ընդգծման կողքին, սրտի խօսք արտասանած հայ թէ օտար գրեթէ բոլոր դէմքերը նաեւ շեշտեցին գլխագիր մարդուն կորուստը: Վեր առին բացառիկ արժանիքները գտարիւն, փափկասիրտ, աշխատասեր, անխորհրդ, գոհաբերող, ծառայատէր եւ «ոչ» բառը իր անօրեայ բառարանէն ջնջած ամբողջական մարդուն, որ հայ գիւղացիի իր մարրամարուր խառնուածքով ու եռուրեամբ բոլորին սիրելի եզակի անհատականութիւն մը եղաւ, եղբայր մը եւ սրտակից մը եղաւ, եւ վեհանձնութեան ու մարքամարուր խառնուածքի անկրկնելի ախոյեան մը:

Իր կենդանութեան արդէն դասական արժէք ու դէմք դարձած գրողը, անկասկած, յետ մահու հաստատագիրներու կարիքն իսկ չուներ: Անոր կշիռը ճշդուած էր արդէն, նոյնպէս՝ մարդկային անխորհրդի բացառիկ որակին չափանիշը: Բայց որովհետեւ ծանր էր հարուածը եւ Հրանտ Մաթեոսեանի սրտին վերջնական լուրջեանքը անոր անձնական թէ գրական մտերմութիւնը նաշակելու բախտին արժանացած բախտաւորները իրենց սրտին մէկ կարեւոր մասն է որ կը կորսնցնէին, սրտի խոր նմուշով նաեւ ողբացին իրաւ մարդուն, այս պարագային՝ «բարեկիրթ գիւղացի»-ին մահը, որովհետեւ, դարձեալ Անդրէյ Բիտովի կուռ ու պարզ սահմանումով՝ «Տաղաւ թէ իմ հայրենակիցներն մէջ հանդիպած լինեմ մինչ ի մահ հայրենիքի, հայրենի եզերքի, ժողովրդի, լեզուի ու պատմութեան հանդէպ ունեցած այսպիսի գտարիւն նուիրութեան թիւն»:

Այսպէս էր ան: Հայոց պատմութեան խորքէն բարձրացող քաղցր ձայն մը, որ Մեսրոպի ծունկերուն մեր ժողովուրդի լինելութեան խորհուրդներն ու գաղտնիքները ուսանելէ ետք, իրերալաշարդ անձնուրացներու աւանդներն ու ուխտերը կտակելէ յետոյ, սերունդներու դարաւոր տեղեկներն ու երագները անմեռ սերմի վերածած՝ ցանց հայրենի իրաւորութեան շարքին հողին մէջ, հողին վրայ գուրգուրաց մօր մը նման եւ քաղցր բազում արդիւնքներ:

Վերջապէս, տպարաններու կիսամուր եւ ցուրտ մթնոլորտէն, կապարաբոյր տողաշար մեքենային ետեւէն սիրոյ, հաւատարմութեան, նուիրումի եւ գերագոյն յանձնառութեան բազում դասեր աւանդած այս անհիճոքային, իրաւամբ, եղաւ այն խորտու անհապետը, որ ապրեցաւ հողին ու մարդուն բախտով, հողին ու մարդուն համար, որպէսզի երբեք եւ երբեկիցէ՝ չխզուի հողին ու մարդուն բարեկամութիւնը եւ չխնայարուին Հայաստանի ու հայ ժողովուրդի ամենօրեայ հաղորդակցութեան կապերը:

Եւ նոյնացաւ: Նոյնացաւ Մարդուն ու Արարիչին, Հայաստանի եւ Հայտնաբանի, Հողին ու Կեանքի հետ, եւ իր քայլ իսկ արժէքով է: Եւ պիտի մնայ կեանքի լուսապայծառ ուղեցոյց եւ մշտակարկաչ աղբիւր:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

Աւանդութիւն է: Հանգուցեալին յուղարկաւորելիս գլխարկը հանում են, ով որ նստած է՝ ոտքի է կանգնում ու երկար, երկար լուռ է: Այս ամէնը ստեղծում է տխուր մի հանդիսաւորութիւն, մտքի ու մտածումների կենտրոնացում, որի ժամանակ յիշողութեան մագնիսը իր վրայ է հաւաքում միայն լաւը, դրականը, խտանում, ուժգնանում, աւելի զգալի է դառնում կորստի չափը, տարողութիւնը:

Ես հիմա մտովի յոտնկայս եմ Հրանտ Մաթեոսեանի յիշատակի առաջ՝ յիշողութիւնս ի մի է հաւաքել ողջ լաւը, պայծառը, գեղեցիկը, ինչ տարիներ շարունակ կապել է ինձ, աւելի ճիշդ՝ իմ սերնդին, երիտասարդ ու տաղանդաւոր Հրանտ Մաթեոսեանի հետ: Հաւաքել է այն հեռուոր օրերը, երբ հրապարակուեց «Ահնիճոր» ակնարկը, եւ մենք՝ զարմացած ու հիացած ձեռքից-ձեռք էինք անցկացնում ամսագրի համարը: Յետոյ Գրողների տան դահլիճում վերեւների կարգադրութեամբ խարազանուում էր այդ գործը, մենք՝ աւագներս, նրա պաշտպանների դերում էինք: Յետոյ անցան տարիներ: Ահնիճորից եկած պատանին դարձաւ Հրանտ Մաթեոսեան: Մենք դարձանք սերնդակիցներ, գրչակիցներ, ընկերներ՝ վէճերի, տեսակէտների, հայեացքների բախման, հաշտութեան, ներման, մտերմութեան բոլոր երանգներով: Եւ այսպէս մինչեւ վերջ:

Իր վերջին հարցազրոյցներից մէկում Հրանտը ասում է՝ «Գրողը պէտք է իրեն պարտադրի հասարակութեանը»: Ինքը հէնց այդ պարտադրողներից էր... նա իրեն պարտադրեց ոչ թէ երեսպնդութեամբ, թեւորք քրտած՝ ճանապարհ օրացելով, վերեւների, ծանօթ՝ բարեկամների միջամտութեամբ, այլ՝ ընկալածօրէն, առանց ճիգ ու ջանքի, Աստու տուածով:

Սակաւախօս էր, խարուսիկ պերճարանութիւն չուներ, աւելի շատ Իգնատ էր, քան Աղուն, հողեղէն էր, հողի պէս ծանր, հաստատուն, իր ունեցածին, իր առածին ու տուածին՝ գիտակ, իր ակօսներում՝ յուսալի ցանքսեր: Երկրի ջիղը հէնց ինքն էր որ կար եւ իր ստեղծածն էլ, իր լեզուն էլ, իր կերպարներն էլ այդ ջիղից էին գալիս: Ու այդպէս ծանր ու ծանրաբեռ գնաց - հասաւ հեռուներ, Մոսկուա, Քիեւ, Եւրոպա, Ասիա, հնչեց աշխարհով մէկ, դարձաւ մեր Զինգիգ Այթմատովը...

- Նա աւելի խոշոր գրող է, քան Այթմատովը, - Գառնի - Գեղարդ ուղեւորութիւնս ասած լիթուացի նշանաւոր գրաքննադատ, խտտաճաշակ Ալգիմանտաս Բուշիսը: Հոգիս փառաւորուեց: Այդ պահին հպարտ էի ու լիացած:

Քէօնի տաճարի հրապարակի սրճարաններից մէկում գրուցում էինք քրեւտ նշանաւոր գործիչ, եւրոպարնակ էվրէմ Հոսէյնի հետ, որը Պէն-կուրի եւ Նորէլեան մրցանակի ժիւրիի հետ զգալի կապեր ունէր: Իր ասելով՝ տատի կողմից հայի խառնուրդ էլ կար մէջը, ու դրանից էր, երեւի, որ յատուկ մի խանդով վրայ բերեց:

- Թուրքերը ամէն տարի Նորէլեան մրցանակի թեկնածու են ներկայացնում, թէկուզ չեն ստանում... Իսկ Հայաստանից ոչ մէկի չեն ներկայացնում... Ի՞նչ է, դուք արժանի գրող չունէ՞ք...

- Ի՞նչպէս թէ չունենք, - եւ առանց մի պահ վարանելու տուեցի Մաթեոսեանի անունը: Երեւան վերադառնալուց յետոյ՝ այս մասին յայտնեցի ղեկավարներին, բայց թուականը 1990ն էր, խառնակ խառնաշփոթ ժամանակներ: Դեկավարները աստուածատուր գրողին, փոխանակ Նորէլեան դափնեկր դարձնելու,

իրենց վստահուած անձը դարձրին, չբախմբի անդամ կարգեցին, նշանակեցին Գրողների միութեան նախագահ, մի բան, որ անյարիր էր Հրանտի անկաղապար էութեանը:

Թէեւ 40 երկար ու ձիգ տարիներ են անցել, բայց մէջս մեխուել-մնացել է «Ահնիճոր»-ից մի սրտնեղած նախադասութիւն, որը մօտաւորապէս հետեւեալն է: «Թողէք որ մարդու հոգին գոնէ իր մի փոքրիկ անկիւնը ունենայ: Ո՛ւր էք դա էլ կարմիր անկիւնը դարձնում»... Աւա՛ղ, մտան այդ անկիւնն էլ, խառնեցին, խառնչեցին, չթողեցին, որ գրողը մնայ առանձին, ինքն իր հետ: Ուրիշներին՝ դեռ ոչինչ, Հրանտն էր ափսոսը, նրա անչափելի քանքարը: Ապրեք այնպէ՛ս, ինչպէս ծնուել էր՝ անխառն իմաստուն, ինքնավայել: Ապրեք ու երկար վայելէր իր ստեղծածը, ստեղծէր նորերը:

Զգիտեմ ինչու ինձ թուում է, որ կեանքի վերջին պահերին Հրանտը մտովին կրկնել է իր մեծ հայրենակցի, իր պաշտած թուամենեանի տողերը:

Արեւելքի եղեմներին իշաւ պայծառ
 Իրիկուն,
 Հեքիաթական պալատներում սպասում եմ
 Իմ հոգուն.
 Ի՞նչ եմ անում ես ցեխերում, աղմուկի մէջ
 վայրենի,
 Ախ, թէ նորից գտնեմ ճամբս դէպի
 Էնտեղ, դէպի տուն...

Գնաց Հրանտը, թողեց այս ցեխերը, այս վայրենի աղմուկները, ու նաեւ թողեց զօրեղ, այս բոլոր ցեխերն ու աղմուկները սրբող - տանող, մեծ ու մաքուր մի գրականութիւն...

ՍԻՆՎԱ ԿՎՈՒՆՏԻԿԵԱՆ

ՄԻ ՈՒՐԱՑԷՔ ՁԵՐ ԵՂԲՕՐԸ

Միայն յաղթանակ, ասելու եմ. պարտութիւնը պառու ջաղու է դառնալու կպչի թիկունքիդ. ինչ կողմի վրայ ուր էլ գնաս՝ վրացին, ուսուր, չեչէնը, յոյնը, պարսիկը, մինչեւ իսկ թուրքը՝ ջահել մարդ ես՝ չե՛ս ամաշոււ, էլ ինչ ես շայակել, ասելու եմ, կի՛նդ է, եկեղցիով հետ պահոււած ես, չե՛ս կարողանում ըստանուել, թէ՛ մայրդ է, ինքն է քեզ բերել՝ պարտաւոր ես. զցիր, ասելու եմ, շան լակոտ, խայտառակ սկսել ես, խայտառակ էլ փակու՛ւմ ես ցեղիդ պատմութիւնը. միայն յաղթանակ, եւ կեանքդ նժոյգ է դառնալու քեզ իր թամպին առնի, եւ բոլոր կողմերիդ վրայ հորիզոններ են բացուելու եւ ընթացքի ճանապարհին քեզ համակիր սիրով են ողջունելու վրացին, ուսուր, չեչէնը, յոյնը, պարսիկը, մինչեւ իսկ թշնամիդ. միայն յաղթանակ, ասելու եմ. պարտութիւնը ինչ, յաղթանակն էլ՝ երկունս էլ մարդուց են, ինքը մարդն են, յաղթանակը ճառագող մարդն է, պարտութիւնը՝ միջանց մարդը: քո խաւարումները քո նախնին արդէն խաւարել է, միջելու տեղ դու ալլեւս չունես, քո սեւերն արդէն քո նախնին հանգել մաշել է, մի անգամ քո կարմիրը հագնելու՛ւ ես. քեզ միայն յաղթանակ է տրուած, մարդ եղիր քո առաջ՝ եւ ձիւրուրուցի:

էին, ինչպէս որ լլկում են: Լաւ Ֆիլմ չէ՛ մեծ Ֆիլմ է, արուած է ի հեռուկս եւ ի փառս մեծ ազգի եւ պետութեան, արուած է մեծ կամքով ու նիւթի ծանր դիմադրութեան յաղթահարումով: Անդրէյ Ռուբլովը այնտեղ «Ահեղ պատաստանը» չի նկարում, չի ուզում նկարել, տատանում է, վանքը կանգնած է: Աւետարանի միւս գրուածքները պատերին են, «Դատաստանի» սպիտակ պատը սպասում է իր մղձաւանջին, իսկ Ռուբլովն ահա - չի ուզում ծնողը լինել այդ մղձաւանջի: Տարկովսկին այնտեղ տեղ է թողել այլ մեկնութեան - որպէս թէ ժամանակի իշխանները մեր շնորհքը իրենց վանքերի համար մեզանից կորզում ու մեր աչքերը հանում են, որպէսզի մեր աչքերը գոյներ ու ձեւեր չպարգեւեն այլ պատերի, - բայց ես իմ հասկացածն եմ հասկանում: Ես չեմ որմնակալարի «Ահեղ դատաստանը», որպէսզի Ահեղ դատաստան չլինի, ինչ փնտռում՝ էն ենք գտնում - ես չեմ նկարի «Ահեղ դատաստանը», խաւար ենք՝ փնտռում՝ խաւար ենք գտնում - իմ խաւարով ձեր աշխարհը ես չեմ պատի: «Ի սկզբանէ էր Բանը», մեր խօսքը գործ է դառնում, իմ «Դատաստանը» սպիտակ ձեփի շերտերի խորքում թող այդպէս էլ չբացուի:

Ասում էք՝ իսկ Դալի՛ն, իսկ «Գե՛րնիկան»,

իսկ «Մահուան տեսիլը», իսկ «Չարքե՛րը»... Մի՛ աւէք «Իսկ Դալի՛ն», որովհետեւ նրա առջեւ ամենեւին ինքը չիփոխ այն երկրորդ, ուր յառնեց ու հաստատուեց ինքը Դալին, այլ լիովին այլ աշխարհայեացքի ուրիշ մարդիկ:

... Միւսնոյն 1915ին են վերաբերում թուամենեանի Է՛ւ ռազմաճակատային՝ արեւմտահայաստանեան օրագրերը, Է՛ւ «Հայրենիքիս հետ» ողբը. «Շատախեցիք գաղթելուց առաջ կոտորել են իրենց ծերունի հայրերին ու մայրերին ու հիւանդներին - իրենց ձեռքով թաղել - ինչպէս եկելը»: «Կային այլ տեղերից, շալկած հոտով բերում էին իրենց պառաւ ծնողներին»: «Փոքրիկ 10 - 12 տարեկան երեխաները շալկած իրենց փոքր եղբայրներին ու քոյրերին: 4 - 5 տարեկան երեխաները օրական 30 վերստ ճամբայ են եկել»: Եւ ապա. անպիղծ բերանի պոկները պիտի գովեն քո նոր կեանքը նոր երդերով, նոր խօսքով:

Իմ նո՛ր հայրենիքի, Հզօր հայրենիք:

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՈՍԵԱՆ

«Հատուած»

ԵՐԿՐԻ ՉԻՂԸ

Վախճանուեց Հրանտ Մաթեոսեանը: Նրա անունը եւ գործը հայոց ստեղծագործական մտքի հարստութիւններից են: Պարոյր Սեւակի, Սերգէյ Փարաճաճովի, Միգայի ու Արտաւազ Փելեշեանի հետ միասին, նա դարձաւ անոր ժամանակների գեղարուեստական լեզուն կերտող բացառիկ ու գորատր անհատականութիւններից մէկը, որը հսկայական ազդեցութիւն թողեց մեր ազգային ու մշակութային ինքնագիտակութեան վրայ:

Հրանտ Մաթեոսեանի արձակը սերում է ժողովրդական կեանքի ամենախորունկ ակունքներից: Նրա գրականութիւնը մարդակալութիւն է: Հաղորդակցուելով այդ գրականութեան կենարար երակի հետ, նրա թե՛ հայ եւ թե՛ օտարազգի ընթերցողները յայտնաբերում են մի անկրկնելի աշխարհ, որն ընդարձակում է ճանաչողութեան սահմանները եւ լի է հոգեւորութեամբ: «Օգոստոս», «Մե՛նք ենք», «Մեր սարերը», «Խոսմիս», «Աշուն արեւ», «Չէ՛ղք օտի», «Ծառեր», «Տէրը», - ահա ոչ լրի ցանկը այն հրաշալի ստեղծագործութիւնների, որոնք անվերապահօրէն դարձել են ժամանակի ճշմարտ եւ արուեստի չափանիշ՝ համաժողովրդական ու միջազգային հռչակ բերելով հեղինակին:

Իրենց կերպարային հարստութիւններով եւ առանձնալատով, զուտ մաթեոսեանական

եւ անկախ կենսափոխաբանութեամբ, այդ ստեղծագործութիւնները սնել են նաեւ այլ արուեստներ, մասնաւորապէս՝ հայ կինոն ու թատրոնը: Հրանտ Մաթեոսեանի երկերի հիման վրայ նկարահանուած հարաձայնաօթ ֆիլմերը հոգեհարապատ ու սիրելի են դարձել իւրաքանչիւր հայի, քանզի ոչ այլ ի՞նչ են, եթէ ոչ մեր էութեան անխորհրդի, խորատես, համարձակ ու անորով յրսելորտներ:

Հայ գրականութեան հիմնաւորը ու բազմախորհրդ աղաւստանում դժուար է մեծութիւն լինելը: Հրանտ Մաթեոսեանի տաղանդը կոշտած էր այդ դժուարութիւնը յաղթահարելուն: Իր բարի, բազմաշերտ, իմաստուն ու դրամատիկ անհատականութեամբ նոր իւրայատուկ խորք եւ նոյնքան կշիռ էր հաղորդում մեր գրական, մտաւորական ու հասարակական կեանքին: Ուստի եւ նրա անձի դառնակորուստ բացալայնութիւնը երկուս ընդգծելու է նրա գեղարուեստական վաստակի ու հոգեւոր լիցքի ներկայութիւնը, քանզի որ հէ՛նց Մաթեոսեանի արձակի մէջ է ապրում եւ իր բնաստեղծ աւիճարի ձայնով խօսում էր երկրի յաւերժական շիրջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱԿԱՆ ԱՐՆԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ԿԱՏԱԿԻՆ ԿԵՍԸ...



Վերջերս ե - Գամակի միջոցով հայ շրջանակներում մեջ սկսած է տարածուիլ ազգային-տան հանելի «բաղադրակա միջոց» մը, գործարգամանքար եւ որոշ բարեփոխումներ կատարելի ետք կը ներկայացնենք ստորեւ:

Երբ Թուրքիոյ խորհրդարանը մերժեց Իրաքի դէմ հաւանակաճ կատարած մը ընթացքին ամերիկեան ուժերու կողմէ Թուրքիան իրեն խորհրդով օգտագործելու ամառաբեր, երկրին վարչապետը Ապտիլլա Կիլի լարուածութիւնը մեղմելու համար հեռաձայնեց Գամակի Գեւորգի Եւ Բաւ:

- Երազիս մէջ Միացեալ Նահանգներու բոլոր շէնքերուն վրայ պատուոցներ տեղադրուած էին:

- Ի՞նչ գրուած էր պատուոցներուն վրայ, հարց տուա Պուշ:

- Գրուած էր «Երկար պայրի թուրքեամերիկեան բարեկամութիւնը», - պատասխանեց Կիլի:

- Այնքան ուրախ եմ, որ հեռաձայնեցիք, ըսաւ Պուշ՝ աւելցնելով, - ես այլ երազ մը տեսայ: Երազիս մէջ Թուրքիան աւելի գեղեցիկ էր, բան երբեք, բոլորովին վերակառուցուած, բարձր եւ լուսաւոր շէնքեր, հիանալի համալիրներ, Իւրաքանչիւր բնակավայրի մօտ պարտէզ եւ լողաւազան: Աւելի և ո՞վ գուգադիպուրիւն, իմ երազիս մէջ եւս Թուրքիոյ բոլոր շէնքերուն վրայ հսկայ պատուոցներ կային:

- Ի՞նչ գրուած էր պատուոցներուն վրայ, հետաքրքրութիւնը չկարեւորով զսպել հարց տուա Կիլի:

- Ձեռակցայ, թէ ի՞նչ գրուած էր, - պատասխանեց Պուշ, - որովհետեւ հայերէն կարդալ չեմ գիտեր...:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՆԹԷՆ ՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Բջիջային հեռաձայնը դարձած է «բազմատաղանդ» կանցիթ, որ կրնայ հեռաձայնի հարկերու թիւեր եւ ե - նամակի հասցէներ ամբարել, բազմատասնեակ երաժշտութիւններու տեսականի մը հրամաններ իր տիրոջ, այլազան խաղեր եւ ժամանցներ կամ ձայնասփիւռ, ծառայել իրեն թուագրային քամերայ կամ ձայնասփիւռ, կապուել համացանցին եւ մասամբ նորին... Այս բոլոր կարելիութիւններով օժտուած սարքի մը մասին խորհրդի անգամ, տակաւին տասնամեակ մը առաջ, անկարելի էր: Նոյնիսկ եթէ մարդ պատկերացնէր նման բազմակողմանի սարք մը, ան պատկերասփիւռի մը ծաւալը պիտի ունենար... Այսօր՝ բջիջային երկու հեռաձայն կարելի է գետեղել ծխախոտի տուփիկին մէջ, եւ արհեստագիտութեան զարգացման այս ընթացքով, մօտ ատենէն երրորդ մըն այլ կարելի պիտի ըլլայ սեղմել միեւնոյն տուփիկին մէջ:

Սակայն մասնագէտներ հարցականի տակ առած են այսօր, թէ ո՞րքանով այս մանր սարքերը կարողացնեն իրենց վրայ դրուած յոյսերը եւ արդեօք աւելի լաւ հեռաձայններ են քան իրենց յաճախ կօշիկի մը ծաւալը ունեցող «նախահայրերը»:

«Ոչ միայն ալիքներ ստանալու կարելիութիւնը շատ աւելի թոյլ է նոր բջիջային հեռաձայններու մօտ, այլ նաեւ բարդերուն կեանքը աւելի կարճ է» կը բացատրէ մասնագէտ մը: Անոնց ընդգրկած խաղերը հաճելի են, բայց «բնդհանրապէս սարքերը խօսելու համար կը գործածենք, ու եթէ այդ մէկը լաւագոյն կատարել կարելի պիտի չըլլայ՝ ուրեմն ի՞նչ է իմաստը», կ'աւելցնէ ան:

Բարդերու հարցը գիշում մըն է, որ պէտք է կատարել երբ աւելի փոքր բջիջային հեռաձայն մը կ'ուզենք ունենալ, կը բացատրեն մասնագէտներ, սակայն


ԱՄԵՐԻԿԱ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱԿԱՆ ԳԵՐԱՐԴԻՒԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ

Իրաքի դէմ շղթայագործուելիք հաւանական պատերազմը առիթ մը պիտի ըլլայ Միացեալ Նահանգներու համար փորձաքարի ենթարկելու տեղեկատուական արհեստագիտութեան բոլոր նուաճումները, որոնք կարելի է օգտագործել իրենց թշնամին շփոթի մատնելու եւ դասալիք դարձնելու համար:

Պատկերացուցէք իրաքի զօրավարներ իրենց բլիջային հեռաձայններուն վրայ ստանան հրահանգներ, որոնք ենթադրաբար Մատտամ Հիւսէյնի կողմէ առաքուած են, սակայն խորքին մէջ ռազմական խաբէութիւն մըն են իրաքեան ուժեր շփոթի մատնելու համար: Կամ երեւակայեցէք ռատար մը, որ շփոթի կը մատնէ օդային պաշտպանութեան պատասխանատուներ, որովհետեւ ամերիկեան օդանաւեր ցոյց կու տայ սխալ դիրքերու վրայ եւ անոնց թռիչքի ուղղութիւնը խեղաթիւրուած կերպով կը ներկայացնէ:

Տեղեկատուական արհեստագիտութեան նորարդոյն նուաճումները միշտ ալ օգտագործուած են պատերազմներու ընթացքին: Համաբարհային Բ. պատերազմին, դաշնակից ուժերը «խաբէցին» գերմանացիները անոնց լրտեսութեան ցանցերուն փոխանցելով իրականութիւնէ հեռու ծրագրեր եւ ռազմավարութիւններ:

Աւելի «մարդիկ որոնք այս ուշ, տեղեկատուական տեղեկ են, արդէն իրաօգտագործուեցան» քայլ պահելու օրուան արհեստագիտական զարգացումներուն հետ: Սակայն համացանցը եւ յարակից այլ զրուցիւններ այսօր զարկ տուած են ռազմական գործողութիւններու մէջ տեղեկատուական արհեստագիտութիւններուն լայն օգտագործման՝ ճակատամարտը մասամբ փոխադրելով երկտրոնային աշխարհ: «Լեքսիթոն» հիմնարկի մէջ պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու վերլուծարանի մը համաձայն «պատերազմներու ընթացքին աստիճանաբար նուազ կը շեղուորուի զինուորները եւ սարքերը ռազմադաշտ արձակելու մօտեցումը եւ փոխադրելը զարկ կը տրուի երկտրոնները եւ Ֆոթոններ արձակելու ռազմավարութեան»:



Սակայն, հասկնալիորէն, Փենթագոն վերապահ է ամէնէն դոյզն ռազմավարական տեղեկութիւնները անգամ հրապարակելու հարցին մէջ: Թէ տեղեկատուական արհեստագիտութիւնը ինչպիսի՞ ձեւերով եւ ի՞նչ տարողութեամբ պիտի օգտագործուի, կը մնայ անյայտ: «Ռէնտ» վերլուծարաններէն մէկուն վկայութեամբ

զուներ թղթիկներ կը թափեն ուր «կը բացայայտուին» Մատտամի ռեժիմի ժխտական կողմերը եւ կոչ կ'ուղղուի իրաքի զինուորները իրենց ստատարելու: Իրաքի զօրավարներ, իրենց կարգին, ստացած են ե-նամակներ, ուր սպառնական ոճով կը զգուշացուին հաւաքական աւերի ուժերը օգտագործելու հրահանգներ գործադրել:


Մարգրուած կը թուի ըլլալ նաեւ հեքիսի յարձակումներ, ապակայունացնելու համար իրաքեան տեղեկատուական ցանցերը: Նախագահ Պուշ արդէն ստորագրած է զարդի հրահանգ մը համացանցին միջոցով յարձակումներ կատարելու կապակցութեամբ: Մեկնարան ձէյմա Պէմֆրթթի համաձայն, «անոնք (ամերիկացի մասնագէտները) այս պատերազմը կը նկատեն հսկայական առիթ: Փորձաքարի պիտի գարնուին բոլոր այն բաները, որոնց մասին երկար ատենէն ի վեր կը մտածէին...»:

Բնականաբար, այս բոլորին դիմաց իրաքեան ուժեր ձեռնածալ պիտի չմնան: Եթէ Պուշ հնչեցրէնէ պատերազմի փողերը, ըստ մեկնաբաններու, Մատտամ Հիւսէյն պիտի բացայայտէ իր ռազմավարական քարտերը, որոնց մասին տակաւին աւելի քիչ բան գիտենք, քան՝ Փենթագոնի ծրագրերը:

«ԱԶԳԱԿ» Ի ԶԵՆՈՒԱԶԱՅՆԻ ԹԻՒԻՆԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն: -258526, 260115 եւ 241274:

ՀԱՄԱԶԱՅՆՈՒ ԵՅՆՃԱՐԻ
«Պ. ՍԵՒԱԿ» ՄԱՆՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ «ԼՈՒՍԱՐՁԱԿ 40» ԹԱՏԵՐԱՍՏՈՒՄԸ
Հովանաւորութեամբ
Ր. Ր. ԴԵՄՊԱՆ ԱՐԵԳ ՅՈՎԿԱՆԻՍԵԱՆԻ
Կը ներկայացնէ՝
ԱԼԵՆԱՆՏՐՕ ՔԱՍՈՆԱՅԻ
«ԾԱՌԵՐԸ ԿԱՆԳՈՒՆ ԿԸ ՄԱՀԱՆԱՆ»
Թատերախաղը 2 արարով
Բեմադրութեամբ ՌՈՊԵՐՏ ԱՈՒԲԵԼԵԱՆԻ
Մասնակցութեամբ Հայրենի մեծահամբաւ դերասանուհի՝
ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆԻ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 14 Մարտ 2003, աշակերտական, կեսօրը ետք ժամը 5:00ին, Շաբաթ 15 եւ Կիրակի 16 Մարտ 2003 երեկոյեան ժամը 8:30ին, Այնճարի «Շտուիկ» սրահին մէջ: Սակ՝ 10,000 Լ. ը.:
Պէրիօդի մէջ Ուրբաթ, 21 Մարտ 2003, աշակերտական, կեսօրը ետք ժամը 4:30ին, սակ՝ 5000 Լ. ը., Շաբաթ 22 եւ Կիրակի 23 Մարտ 2003 երեկոյեան ժամը 8:30ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ: Սակ՝ 10,000 Լ. ը.:

ԲԱՐԻ ԵԿԱՐ 21ՐԴ ԴԱՐՈՒ ԼՐԱՏՈՒԹԻՒՆ



22 Փետրուար 2000ին, կէսօրէ ետք ժամը 2:22ին հարաւային քորէացի ՕՏ ԵՅՈՆ - Հօ համացանցին վրայ հրապարակեց լրատուական www.ohmynews.com հասցեով կայքը: «Այս քայլով» «մնաս բարով» որն 20րդ դարու թղթակցութեան» կ'ըսէ ԵՅՈՆ Հօ, որուն նպատակն էր հանրութիւնը փոխներգործուն կերպով ներառել լրատուութեան եւ լուրերու վերլուծումի աշխատանքներուն մէջ՝ անոնց առիթ ընծայելով անձամբ մասնակցելու լրագրութեան աշխատանքներուն: «Նախագիտ տեղեկութիւնը կը հոսէր մէկ ուղղութեամբ», կ'ըսէ ԵՅՈՆ - Հօ, աւելցնելով: «Մեր թերթին նպատակն է բոլոր քաղաքացիները մասնակից դարձնել»:

Նպատակ մը, որ յաջողեցաւ: Այսօր թերթը ունի միայն 41 արհեստավարժ աշխատակիցներ եւ անոր աշխատանքներուն առիւծի բաժինը վերապահուած է 23 հազար «լրագրող քաղաքացիներու», որոնք թղթակցութիւններ կ'ուղարկեն բազմաթիւ նիւթերու մասին եւ կը ճշդեն «ՕՏ մայ Նիւզ»-ի խմբագրական ուղեգիրը: Թերթի մնայուն անձնակազմը պարզապէս կը ստուգէր փոխանցուած տեղեկութիւններուն ճշգրտութիւնը եւ միայն փոքր թիւով յօդուածներ նկատառելի փոփոխութեան կ'ենթարկուին:

Թէեւ «լրագրող քաղաքացիներ» դրեթէ նիւթական ոչ մէկ յատկացում կը ստանան իրենց աշխատանքներուն համար, սակայն իրենց ստորագրած յօդուածներուն ընթացումը միլիոնաւորներու կողմէ հոգեկան բաւարարութիւն կը ներշնչէ անոնց:

Լրագրող քաղաքացիները, «386 սերունդ» կը կոչուին: Անոնք նոյն այդ սերունդն են, որ ծնած է 1960ականներուն եւ 1980ականներուն, ռուսաոճական շարքերուն մէջ պայքարած է զինուորական բռնապետութեան դէմ: Այժմ, 20 տարի ետք, անոնք իրենց պայքարը փոխադրած են անիրական աշխարհ, համացանց եւ պատրաստ են մամուլի միջոցով եկող սերունդները պատրաստելու...:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱՐԱԳՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԻՇԸ ԿՈՏՐՈՒԵՑԱԻ

«Սթէնֆորտ Լինիւր Էքսլորէյթը Սենթրէլ» մէջ գիտնականներ Փայպըր օփթիթէ կառուցուած քէյ-պըլներով վարկեանէ մը նուազ ժամանակի մէջ 6,7 կիլոպայթ տեղեկութիւն փոխադրեցին շուրջ 5000 քիլոբէթ անդիլ գատնուող կեդրոն մը:

Խուճը յաջողեցան Քալիֆորնիայի Ամսթերտամ երկվայրկեանի մէջ 923 մէկպայթ տեղեկութիւն ուղարկել, ինչ որ պրոտոպէնս դրութեամբ կատարուող համացանցի հասողութեան 3500 անգամ աւելի արագ կը նկատուի:

Այս փորձարկումին շնորհիւ կարելի կրնայ դառնալ «գեր արագ տեղեկութիւններու փոխանակման դրութիւնը ամենօրեայ կեանքի մէջ օգտագործելի դարձնել, այսպէս, օրինակ, տարբեր վայրերու մէջ գտնուող բժիշկներ կրնան բաժնեկցիլ հիւանդի մը սրտի քննութեան արդիւնքները եւ բուժման ձեւերու շուրջ խորհրդակցիլ», ըսաւ մեկնարան մը: 1984էն ի վեր համացանցի միջին արագութիւնը ամէն տարի կը կրկնապատուի: Գիտնականներ կը նախատեսեն որ այս ընթացքը շարունակուի:

Բնականաբար, համացանցի գեր-արագ դառնալը ոչ միայն մասնագէտներու եւ արհեստավարներու ձեռնտու է, այլ՝ բոլորին, «պատկերացուցէք որ կարելի պիտի ըլլայ մէկ վայրկեանէ նուազ ժամանակի մէջ երկու ժամ տեղեկութեամբ երկու ֆիլմ արձանագրելու համացանցին» կ'ըսէ Սթէնֆորտ կեդրոնի մասնագէտներէն Լէս Քոթրէլ, «այդ մէկը մամուլի մասնակարարման հասկացողութիւնը կրնայ ամբողջովին յեղաշրջել»:

Սակայն համացանցի ապագային մասին յստակ պատկերացումներ չկան: Քալիֆորնիոյ արհեստագիտութեան հիմնարկի պատասխանատուներէն Հարվի Նիւմընի խօսքերով՝ «համացանցի ապագային մասին պատկերացում մը չունինք տակաւին այդ ամբողջ նոր աշխարհ մըն է, որուն մասին տարտամ զաղափարներ ունինք սակայն չենք գիտեր, թէ ճիշդ ի՞նչ պիտի ըլլայ...»:

Պատրաստեց՝ Խ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Մանկապատանեկան


ԱՐՈՒԵՍ

ՄԵՏԱՂԵԱՅ ԱՐՉԱՆԻԿՆԵՐ

Չսպանակ մը, խողովակի կտոր մը, քանի մը պտուտակ... Առանց մոռնալու քիչ մը զուարթախոհութիւն, երեւակայութիւն եւ հնարամտութիւն: Ահա թէ ի՞նչպէս քանդակագործ ժիլ Ֆրետո կը ստեղծէ իր տարօրինակ մետաղեայ տիպարները...

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԵՆ...

Երբ իր մանկութեան մասին կը խօսի, ժիլ Ֆրետո կը պատմէ, թէ ան միշտ գծած է: Յատկապէս տիպարներ: Ապա, ժամանակի ընթացքին, պատմութիւններ պատմած է գծուած երիզներու միջոցաւ եւ կաւերով շինած՝ մաքրքրներ: Ամբողջ աշխարհ մը, գոր ան կը ստեղծէր շնորհիւ իր սուր երեւակայութեան: Ժիլ կը սիրէ ձեռքերով աշխատել: Քանի մը տարի ետք, ան նորոգութիւններ կը կատարէ իր տան մէջ ծորակներ շինելով, երաժշտութեան մեքենան նորոգելով...



Կապիկներու թագաւորը

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԸ

Օր մը մետաղեայ աւելորդ կտորներով ան կը շինէ սեղանին պատիկ լուսամտի մը: Անոր կուտայ տարօրինակ տիպարի մը կերպարանքը եւ գայն կ'անուանէ «Փիրօտէրնօթ»:

Իսկ երբ արհեստավարժ քանդակագործ լարեկամ մը այս լուսամտի փոփոխ կը տեսնէ, գայն

իւրայատուկ կը գտնէ եւ ժիլը կը քաջալերէ, որ շարունակէ երկաթեայ քանդակներ շինել:

ՆԵՐՇՆՉՈՒՄԻ ԱՂԲԻՐ

Ժիլ կը սկսի տարբեր աչքով դիտել իր մետաղէ կտորներուն դէզը: Ան կը փնտռէ պատիկ կտոր մը, որ զինք կը ներշնչէ, եւ այդ պատիկ տարբէն մեկնելով կը ստեղծէ իր արձանիկը:

Ժիլ կը ներշնչուի գծուած երիզներէն, շարժուն պատկերներէն, ճափոնական մանկաներէն եւ գիրքերէն:


ԻՆՉՊՈՒՄ Կ'ԱՇԽԱՏԻ

Ժիլ շատ կազմակերպուած է: Ան կտորներ կը փնտռէ գործարաններու մնացորդներուն մէջ, Լիոն քաղաքի մայթերուն վրայ... Ան կ'օգտագործէ մետաղեայ որեւէ կտոր: Ապա գանոնք կը կտրէ, կը տաշէ, անոնց դոյնը կը փոխէ՝ մէկ խօսքով՝ իր նիւթը կը պատրաստէ:

Իր բոլոր արձանիկները շինուած են առանց մածուցումի: Ժիլ գանոնք իրարու կը փակցնէ տարբեր տեսակի դամբը գործածելով: Որովհետեւ, ըստ իրեն, ասիկա ամէնէն լաւ միջոցն է շարժումի տպաւորութիւնը տալու համար:



Վիուկը



Չի մարդը սաքսոֆօն կը նուագէ

ՀԱՐՅԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1) Սակրատա Ֆարմիլիան կառուցուած է Կառուտի կողմէ: Ի՞նչ է այս շինութիւնը:
- Եկեղեցի մը:
- Վանք մը:
- Վիլլա մը:

2) Ի՞նչ ազգի կը պատկանէր նկարիչ Վան Կոկ:

3) Ո՞ր թագաւորին հաշուոյն կ'աշխատէր Լէոնարտո Տա Վինչի:

4) Ո՞ր տարին հռչակուած է Չինաստանի Ժողովրդային Հանրապետութիւնը:
- 1949ին:
- 1957ին:
- 1962ին:

5) Ո՞րն է Փարակուէյի մայրաքաղաքը:

6) Ո՞ւր կը գտնուի Թանկանիքա լիճը:
- Արեւմտեան Աֆրիկէի մէջ:
- Կեդրոնական Աֆրիկէի մէջ:
- Հիւսիսային Աֆրիկէի մէջ:

7) Արեգակնային դրութեան ո՞ր մոլորակը ամէնէն երկար տարին ունի:
- Լուսնի մը:
- Հրատը:
- Պլուտոնը:

8) Մալուիններու պատերազմը ո՞ր երկու երկիրներու միջեւ տեղի ունեցաւ:
- Արժանթին եւ Անգլիա:
- Չիլի եւ Անգլիա:
- Մեքսիքա եւ Միացեալ Նահանգներ:

9) Ո՞ւր կը գտնուի Փափէթին:
- Հայիթիի մէջ:
- Թահիթիի մէջ:
- Հաուայի մէջ:

10) Երկրագունդին անտառներուն տարածքը անդադար կը նուազի: Ան որքա՞ն նուազած պիտի ըլլայ 2010 թուականին՝ 1990ին բաղադրուած:
- 20 առ հարիւր:
- 30 առ հարիւր:
- 40 առ հարիւր:

11) Միջին հաշուով, թիթեռնիկը քանի՞ անգամ կը շարժէ իր թևերը մէկ երկվայրկեանի մէջ:
- 2:
- 8:
- 16:

12) Ո՞րն է աշխարհի ամէնէն մեկուսացած կղզին: Ան իր ամէնէն մօտիկ դրացի երկրէն 2,400 քմ. հեռու կը գտնուի:
- 5 առ հարիւր:
- 30 առ հարիւր:
- 60 առ հարիւր:


13) Որքա՞ն տարածութիւն կը ծածկեն երկրագունդին անտառները:
- 5 առ հարիւր:
- 30 առ հարիւր:
- 60 առ հարիւր:

14) Ո՞վ ստեղծած է «Փափայ տը Սէյլըր» տիպարը:
- 5 առ հարիւր:
- 18 առ հարիւր:
- 36 առ հարիւր:


15) Որքա՞ն է աշխարհի անապատներուն տարածութիւնը:
- 5 առ հարիւր:
- 18 առ հարիւր:
- 36 առ հարիւր:

Պատասխանները էջ 8


Ժ Ա Մ Ա Ն Ց



Կետերը իրարու միացուր 1-51՝ գտնելու համար պահուած պատկերը:



Կրճա՞ս գտնել, թէ իւրաքանչիւր գնդակ որ ծակին մէջ կ'իյնայ:



Կրճա՞ս գտնել տուփիկներուն ձիշո՞ շարքը:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«ԱԶԴԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԴԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևելու թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գ. Մ. Գ. Մրցանակի դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2003ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Գ. Մ. Գ. Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական որեւէ նոր, անտիպ, կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր առ ի գնահատում եւ հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական եւ հայ մշակութիւնի այլ կալուածներուն վերաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասան ըլլան ամենաուշը մինչեւ 31 Մայիս 2003:

Առաջուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած եւ երեք օրինակով: Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան:

Վեհափառ հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը կազմեն՝ Արտաւագդ արք. Թրթեան, Չարեհ արք. Ազնաւորեան, տիար Գեորգ Գանտահարեան (ատենապետ), տիար Պետո Սիմոնեան (ատենադպիր), տղթ. Արմենակ Եղիայեան, տիար Պողոս Սնայեան եւ տիար Փիրայր Դանիէլեան:

Դատակազմին հասցեն.-
Armenian Catholicosate of Cilicia
P. O. Box 70317
Antelias - Lebanon
E - Mail: cathcil@cathcil.org
Fax: +961 - 4 - 419 724

Դիւան
Գ. Մ. Գ. Մ-ի Դատակազմ

ԾԱՆՈԹ.- Դատակազմին ղրկուած գործերը հեղինակին չեն վերադարձուիր:

ՀՕՆԻ «ՄԵՂՐԻ» ՄԱՍՆԱՃԻՒԼ

ՊԱՇԻ ԾԱՇԵՐՈՒ ՊԱԶԱՐ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 15 Մարտ 2003, կեսօրից մինչև 4:00Ե 7:00Ե, Ե.Մ.Ը.Մ.ի Քաղաքի ակումբին մեջ:

ԵՐԱՍՏԵՔ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԵՐՄԻՆԷ ԹՆՃՈՒԿԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 16 Մարտ 2003, Աճախի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀՕՆԻ ՆԱՅԻՐԻ ՄԱՍՆԱՃԻՒԼ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԵՕԶԻՆԵԱՆԻ մահուան քառասունընդամաս առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 16 Մարտ 2003, Ջալալի Հայ Կաթողիկէ Ս. Խչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00Ին:

ՍԵՂԱ ՍԱՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 16 Մարտ 2003, Նոր Մարտիկ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀՐԱԶ ԹԻԹԻՋԵԱՆԻ մահուան քառասունընդամաս առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 16 Մարտ 2003, Զեսայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆՆԱՅԵԱՆԻ մահուան Ե. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 16 Մարտ 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԻՆՉՔԱՌ ԹԻՒ 5390
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|--|--|
| 1. Գէշ դաստիարակուած - Ածականակերտ մասնիկ: | 1. Բացորոշ - Սոսկալի: |
| 2. Ականջի կեղտ - Անհր-րաժեշտ: | 2. Նիհար - Կուրծքի սլաքածե գարդասեղ: |
| 3. Ցերեկ օր - Ածականակերտ մասնիկ - Կրկնուած բաղաձայններ: | 3. Արական անուն - Լեզուով մը այր: |
| 4. Անմեկնելի, անպատմելի: | 4. Շաղկապ - Սփիւռքահայ բանաստեղծուհի՝ Կիրակոսեան: |
| 5. Կանացի օտար շաբաթաթերթ - Տանիք: | 5. Բարբաբ - Սաւուղի հայրը - Կրկնուած բաղաձայններ: |
| 6. Ցուցական դերանուն - Խաղաթուղթի մէկ կողմ: | 6. Կամաց կամաց - Կանցի կոչական բառ: |
| 7. Ժխտական մասնիկ - Աւր - Տոտն: | 7. Այրուբենէն - Կրկնուած բաղաձայններ - Կամշոտութիւն: |
| 8. Ասկերանի գիւղերէն - Հայկական ամիսներու ժԼ. օրը: | 8. Բեմական աշխարհ - Կողոպտուած: |
| 9. Լձկան կենդանի - Կնքահայր: | 9. Ոգոխ - Ցուցական դերանուն: |
| 10. Այրուբենէն - Հանգրուան: | 10. Կրկնուած ձայնաւորներ - Օրաթերթ: |
| 11. Շագանակ - Փխրուն, դիւրափշուր: | 11. Սածիլ - Կիլիկեան ոստան - Նիւթ: |

ԹԻՒ 5389

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2	3	4	5	6	7	8	9	10	11	
3	4	5	6	7	8	9	10	11		
4	5	6	7	8	9	10	11			
5	6	7	8	9	10	11				
6	7	8	9	10	11					
7	8	9	10	11						
8	9	10	11							
9	10	11								
10	11									
11										

7ԴԳ ԷՋԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1) Եկեղեցի մը, 2) Հոլանտացի, 3) Ֆրանսուա Ա., 4) 1949ին, 5) Ասանսիոն, 6) Կեդրոնական Ափրիկէ, 7) Պոլսոն, 8) Արժանքի եւ Անգլիա, 9) Թահիրի, 10) 40 առ հարիւր, 11) 8, 12) Թրիսթան Ծափուկ կղզին, 13) 60 առ հարիւր, 14) Սեկար, 15) 18 առ հարիւր:

www.hamazkayin.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէշրուի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,35 - 32,45 Լ.Ն.
Իրաքեան տինար	4855,00 - 4865,00 Լ.Ն.
Քուէթեան տինար	5025,00 - 5050,00 Լ.Ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 Լ.Ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00 Լ.Ն.
Ա.Մ. Էմիրութեան տինար	410,75 - 412,75 Լ.Ն.
Բարաբեան ուիալ	413,75 - 415,75 Լ.Ն.
Սէուտական ուիալ	402,00 - 404,00 Լ.Ն.
Օմանեան ուիալ	3895,00 - 3920,00 Լ.Ն.
Եգիպտական կինէ	256,00 - 266,00 Լ.Ն.
Անգլիական սթըրլին	2396,00 - 2406,00 Լ.Ն.
Չուիցերիական ֆրանք	1105,00 - 1110,00 Լ.Ն.
Թրքական լիրա	91,20 - 91,70 Լ.Ն.
Կիպրական փաունտ	2790,00 - 2815,00 Լ.Ն.
Ճափոնական հապար եէն	12,65 - 12,75 Լ.Ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2,85 - 2,90 Լ.Ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 Լ.Ն.
Քանադական տոլար	1012,00 - 1017,00 Լ.Ն.
Աւստրալիական տոլար	895,00 - 900,00 Լ.Ն.
Եւրօ	1624,00 - 1634,00 Լ.Ն.

● **ՈՍԿԻ**

Անգլիական մէկ ոսկի	131,000 - 136,000 Լ.Ն.
Իրանեան մէկ ոսկի	116,000 - 121,000 Լ.Ն.
Օմանեան մէկ ոսկի	107,000 - 112,000 Լ.Ն.
Մեքսիկական փէսոս	620,000 - 640,000 Լ.Ն.
Մէկ քիլոկրամ ձոյ ոսկի	16,135,000 - 16,335,000 Լ.Ն.
Մէկ օնս ոսկի	334,60 - 335,10 \$
Մէկ օնս արծաթ	4,54 - 4,56 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը եւրօ

Քանադական տոլար	1.0772 - 1.0776
Չուիցերիական ֆրանք	1.4877 - 1.4883
Ճափոնական եւե	1.3625 - 1.3630
Մէկ սթըրլին	118.46 - 118.52
Մէկ սթըրլին	1.5892 - 1.5900

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՇՆԵԾՈՒՂԹԵՐ**

Գինի Ա. ճշդում	Գինի Բ. ճշդում	
Ա. կարգ	4 3/8	4 4/8
Բ. կարգ	5	5

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՒ. 01-252852

☆ **Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ** ☆

☆ **ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)**
Տան մէջ ձայնաբերութիւնները իրարու պիտի յաջորդեն, իսկ դուք վատ տրամադրութեան մէջ պիտի գտնուիք: Օրը կը թելագրէ ըլլալ համբերող, հանգարտ:

☆ **ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)**
Պիտի յաջողիք համոզել ձեր խօսակիցը, որպէսզի որդեգրէ ձեր տեսակետը: Այսուհանդերձ որոշ չէ տակաւին, թէ ձեր դիրքաւորումը պիտի յաջողի:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)**
Պիտի ստանաք գումար մը, որ թոյլ պիտի տայ ձեզի իրագործելու ձրագիր մը: Այս պարագան պիտի ուրախացնէ ձեզ՝ ամբողջ օրը լաւ տրամադրութիւն տեսնելով:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)**
Այսօր նոր օր մը պիտի ծագի ձեզի համար, որովհետեւ ոմանք պիտի շոյեն ձեր նարսիսական ինքնասիրութիւնը: Վայելեցէք օրուան այս հանոյքը, որ երկար պիտի չտեսէ արդէն:

☆ **ԱՌԻԻԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս)**
Առեւտուրի կամ բարեկամական մարզի մէջ գրոյցներ, աշխատանքի մասին նոր որոնումներ փոխութիւն պիտի բերեն ձեր միօրինակ առօրեային մասամբ խանդավառելով ձեզ:

☆ **ԿՈՅ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)**
Ձեզի մօտիկ անձի մը տարեդարձին համար նուրբ մը պիտի ընտրէք, որ այնքան հանելի պիտի թուի ստացողին, որ իր ամբողջ կեանքին ընթացքին պիտի չմոռնայ զայն:

☆ **ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)**
Ձեզի պիտի ներկայացուի նոր առիթ մը, որ հաստատեք ձեր կարողութիւնը: Օգտուեցէք ընծայուած այս նոր առիթին, որովհետեւ ուրիշ մը պիտի չկարենաք ունենայ:

☆ **ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)**
Արտասահման ապրող ձեր բարեկամները ձեզի պիտի առաջարկեն այցելութիւն մը տալ իրենց: Ինչո՞ւ համար չկատարել այս փոքր նամբարդութիւնը: Պիտի ուրախանաք:

☆ **ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)**
Ձեր լաւատեսութիւնը պիտի մղէ ձեզ լաւ տեսնելու կայսրութեան մը սեւ կողմը: Տատեր պիտի նախանձին ձեր այս յատկութեան համար: Այս ալ հանելի է:

☆ **ՅՅԵՂՋԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)**
Ձեր սիրած անձը կ'ակնկալէ, որ միշտ դուք ըլլաք իրեն հետ կապ պահողը, դուք հարցնէք իր որպիսութիւնը: Ուրեմն՝ ե՞րբ է ձեր ամուսնութիւնը: Հարցը վերջնականապէս որոշեցէք՝ վերջ տալով սպասումներու:

☆ **ԾՈՒՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար)**
Ձեր աշխատանքին մէջ ձեր փոխանցած միտքերը պիտի հանդիսանան սեփական փայտեր: Բայց, միւս կողմէ, ձեզի նախանձող պաշտօնակիցները ձեզ պիտի արհամարհեն: Նկատի մի՞ առնէք զանոնք:

☆ **ՋՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)**
Ձեր բարեկամները պիտի առաջարկեն ձեզի երբալ քատրոն՝ տեսնելու ներկայացում մը, գորչէիք տեսած: Տատ գոն պիտի ըլլաք:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵԱՄ / ԹԱՏՐՈՆ

ԺԱՆ ՓՕԼ ՍԱՐԹՐԻ «ՀՈՒԻ ՔԼՕ»

ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ «ՆՕ ԷՔԳԻԹ»

Յրանսացի գոյութենաբան (1959) տեսարաններ, ժան Փոլ Սարթրի «Հուի քլօ» նշանաւոր թատերախաղը, որ կը ներկայացնէ ղոթիքը խորհրդանշող սենեակի մը մէջ երեք դատապարտուած հերոսներու գոյակցութիւնը, արդէն իսկ որոշ ժամանակէ մը ի վեր կը ցուցադրուի «Մետինէ» թատերաւաճան արարեթէնի իօսակցական տարբերակով ներկայացուող եւ «Նօ Էքպիթ» թատերախաղը բեմադրուած է Սիհամ Նասիւրի կողմէ: Ան թատերախաղին ընթացքին բեմին կեդրոնը տեղադրուած է պատմական կերպարները կը խոստանան իրենց միջեւ կը ստեղծէ կապ մը, եւ կերպարները կը խոստովանին իրենց մեղքերը, կ'արտայայտեն

իրենց մտածումները եւ կը բացայայտեն իրենց վախերն ու տագնապները: «Նօ Էքպիթ»ի կերպարներէն Կարսին, որուն դերը կը մարմնաւորէ ժողով Նասսար, թատերախաղին սկիզբը կը յայտարարէ, թէ ինք դատապարտուած է խաղաղասէր ըլլալու մեղքով, մինչ Էսթի, որուն կերպարը կը խաղայ Թաքլա Շամուն, կը պնդէ, թէ ինք սիսալի մը պատճառով կը գտնուի այդ վայրը: Միայն երրորդ կերպարը՝ Ինէպ, որ մարմնաւորուած է Ժիւլիա Քասարի կողմէ, կ'արգիլէ, որ կերպարները ստեն իրենք իրենց անձերուն: Եւ այդպիսով է, որ թատերախաղին ընթացքին կը քակուի իրարաբան չիրին եսին կօիկը: «Նօ Էքպիթ»ի ելոյթները կը շարունակուին մինչեւ 22 Մարտ, «Մետինէ» թատերախաղին մէջ, երկուշաբթի ժամը 8:30Ին:

ԱՅՍՈՐ

- Թատրոն. Համագայինի «Արեգ» մանկապատանկան թատերախումբի «Երկու բարախ» ներկայացումը, ժամը 17:00Ին, «Յովհաննէս Պօղոսեան» թատերասրահին մէջ:

- Փառատոն «Ֆեսթիվալ Հիսթորիո-ամերիկեան կիթառ», փակման ելոյթ, ժամը 19:30Ին, «ԵՌՆԵՍՏՐՈՅԻ ՍՐԱՅԻՆ» մէջ:

- «Ալ Պուսթան» փառատոն. ելոյթ կ'ունենայ «Ուլիքըր քամերալ» ուր հոգիները զատկան ճաշակով բեմադրուած ժամը 20:30Ին, «Ալ Պուսթան» պանդոկին մէջ:

- Փառատոն «Ֆեսթիվալ Շամուն Թեթե» ժամը 20:30Ին, «Պէլլոյ» թատերասրահին մէջ:

- Երգախաղ եւ պարային թատրոն՝ Մանուր Թահպաքիի «Մլուր էլ Թաուէֆ», ժամը 20:30Ին, «Քաղիս տիւ Լիպան»ի մէջ:

- Նկարչական ցուցահանդէս՝ Նազեմ Մըզքերի «Նաթիւր մորթ Է փետած», Քիւրիլիցեցիքումի մէջ, մինչեւ 21 Մարտ:

ՇԱՐԱԹ, 15 ՄԱՐՏ 2003

ՊԵՅՐՈՒԹ ՄԱՍԱՐԲ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵԿ 19°C

ԳԻՇԵՐ՝ 12°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 73%

ԱԶԳԱԿ **50 ՏԱՐԻ ԱՌԱՋ** 15 Մարտ 1953

ՀԱՅ ՕԴԱՆԱՒՈՐԴԻ ՄԸ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕԴՈՒԺԻՆ ՄԷՋ

Քալիֆորնիոյ մեր ընկերներէն Աւագ Աւագեան ձափոն հաստատուած օդուծի հրամանատար Իւլմըր Յրանսիսեան ստացած է զգաճական նամակ մը՝ իր գաւկիմ Լիւնի (Վահագն) Աւագեանի յաջողութիւններուն մասին:

Հրամանատարը կը գրէ իր նամակին մէջ.

«Վերջերս հանոյքն ունեցայ աստիճանի բարձրացում տալ ձեր գաւկիմ, որպէս *էյրմըն ֆրայթ քլաս*: Ձեզ պետք է չեմօրէն շնորհաւորել ոչ միայն ձեր որոյնք աստիճանի բարձրացման համար, այլ նաեւ անոր համար, որ ան օդուծի ասպանութեան զգաքը:

Իրենց դարձուցած է յաջողութիւն մը: «Լիւնիի նման մարդիկն են, որ մեր *էսթատուր*ը դարձուցած են օդուծի լաւագոյններէն մէկը: Իր ընդունակութիւնը, բարոյական կեցուածքը եւ օրինակելի վարքը կ'անդրադառնան թէ ձեր եւ թէ իր վրայ: Կը յուսամ, որ ան պիտի ուզէ օդուծը դարձնել իր տեսական ասպարեզը՝ ձեր բերելով տնտեսական ապահովութիւն եւ արագ վերելք, որովհետեւ այդպիսիները շատ պիտանի են օդուծին:

«Ան կը ծառայէ իր երկրին այնպիսի ջանասիրութեամբ, որուն համար հպարտ պետք է զգաքը»:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՊԱՍՔԵԹՊՈԼ ԱՂԶԿԱՆՑ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱԺԷՍ - Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍ՝ 2-0

Լիբանանի պատերազմի աղջկանց Ա. դասակարգի ախտաբանության ֆայնալ ֆորմալ մրցումներում, երէկ, Հ. Մ. Ը. Մ.ի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս 77-61 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սաժէս Մար Տումէթէն: Ա. կիսախաղին եւս Սաժէս յառաջացած էր՝ 40-27 արդիւնքով: Այսպիսով, Հ. Մ. Ը. Մ. կրեց իր երկրորդ պարտութիւնը՝ Սաժէսէն: Անցեալ Չորեքշաբթի օրուան հանդիպումը տարած էր 63-47 արդիւնքով:

Երրորդ ձևատու մը տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի, ժամը 6:00ին, Սաժէս Ժրոնթիէի դաշտին վրայ: Յաղթանակ մը եւս արձանագրելու պարագային, Սաժէս կ'ապահովէ տարտական մրցումին իր տոմսը, մինչ Հ. Մ. Ը. Մ. պիտի փորձէ երրորդ դիրքին տիրանալ:

ՀԵԾԵԼԱՐՇԱԿԻ ԱՇԽԱՐՀԸ ԿՈՐՄՆՑՈՒՑ ՔԻՎԻԼԵԻԸ

Անցեալ Չորեքշաբթի, 12 Մարտին, հեծելարշաւի աշխարհը պարեցաւ սուգի օր մը, երբ դասակարգի Անթիլիէ Քիվիլիէ մահացաւ՝ Փարիզ - Նիս մրցումին ընթացքին Սէնթ Էթիէնի մտերմ տեղի ունեցած արկածի մը հետեւանքով: Ան ծանրօրէն վիրաւորուած էր գլուխէն եւ փոխադրուած՝ հիւանդանոց, սակայն քանի մը ժամ ետք մահացած էր:

29 տարեկան Քիվիլիէ, որ ամուսնացած է եւ ունի մէկ կուսակ, մաս կը կազմէր «Քոֆիտիս» խումբին: Ան հեծելարշաւի աշխարհի ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւէր 50րդ դիրքը: 1998ի տարտական արհեստավար դարձած Քիվիլիէ 1996էն ետք կը դառնայ առաջին մարզիկը (սպանացի Մանուէլ Սանրոմայէն ետք), որ վոն կ'երթայ հեծելարշաւի արկածի մը:

Փարիզ - Նիս շրջանակներ կ'աւարտի վաղը՝ Կիրակի:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՆ ԲԱՅՈՒՄԸ...

Շարունակուած Ա. էջէն

համար Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան երիտասարդական եւ մարզական հարցերու 29րդ վեհաժողովին, որ տեղի կ'ունենայ «Մեթրոփոլիթըն» պանդոկին մէջ: Հանդիպումին ստորագրուեցաւ փոխ գործակցութեան համաձայնագիր մը:

Հինգշաբթի, 13 Մարտին, նախարար Յովնանեան այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի: Քննարկուեցան շրջանային վերջին իրադարձութիւնները, անոնց լոյսին տակ՝ իրանական բեմին վրայ միասնականութեան անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ յաջորդ օր՝ Ուրբաթ 14ին կայանալիք ֆրանսախօս երկիրներու վեհաժողովին կապուած հարցեր:

Նոյն օրը, նախարար Յովնանեան, ընկերակցութեամբ ռումանացի իր պաշտօնակիցին եւ Լիբանանի մէջ Ռումանիոյ դեսպանին, այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Քննարկուեցան ֆրանսախօս երկիրներու խորհրդաժողովին առնչուող կէտեր:

ԵՐԱՊՈՐԱԿԻ ՎՐԱՅ Է
ՌԱԶՄԻԿ
RAZMIG
Հ.Յ.Դ. Լ.Ե.Մ.Ի ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
Թիւ 26-28 Դեկտեմբեր 2002 - Փետրուար 2003

ԼՕԽԻ
«Ա. ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ»
ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՒՄԻ
ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾԻ ԳՐԱՍԵՆՆԱԿ

Եթէ կարիքը ունիք լիաժամ կամ կիսաժամ՝
●Մաքրութեան պատասխանատուներու
●Սուրճ եփող տիկիներու
●Ծերերու հոգածութեան պատասխանատուներու
●Մանուկներու հոգածութեան պատասխանատուներու

Հաճեցէք հեռաձայնել հետեւեալ թիւին. 01-253793
Ext. 121. կամ անձամբ ներկայանալ «Ա. Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոն, Ա. յարկ, Երկուշաբթի, Չորեքշաբթի, Ուրբաթ օրերը, ժամը 2:00 4:00:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՄԵՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ Հ. Մ. Ը. Մ. - ԻԺԹԻՍԱԿԻ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախտաբանության 19րդ մրցումներում, երէկ, Հ. Մ. Ը. Մ.ի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ տեղի կ'ունենայ մրցում մը, որի մասնակիցները Վաղը՝ Կիրակի, ժամը 6:00ին, Սաժէս Մար Տումէթէն կ'ապահովէ տարտական մրցումին իր տոմսը, մինչ Հ. Մ. Ը. Մ. պիտի փորձէ երրորդ դիրքին տիրանալ:

Դրո Քէհէեան: Վաղը դարձեալ նոյն կորովնու կամքը կը սպասուի իրաքանչիւր մարտիկէ, որովհետեւ միայն խմբային խաղարկութեամբ է, որ կը կերտուի յաղթանակը:

Նոյն օրը եւ նոյն ժամուն, Հ. Մ. Ը. Մ. Պիամտունի դաշտին վրայ կը ձևատուի Հրրիէ Մաժալ Այն-ճարի դէմ:

●ՍՏՈՐԵՒ՝ Ա. դասակարգի ախտաբանության 16րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ՀԱՐԱԹ, 15 ՄԱՐՏ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ախտ - Սաֆա	4:45ին	Պէյրուք
Պըրժ - Նըժմէ	6:00ին	Մ. Աւան
ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՐՏ		
Օլիմփիք - Սալամ	3:00ին	Պէյրուք
Թ. Սուր - Ախա Ալէյ	3:00ին	Սուր
Մապարա - Սաժէս	3:00ին	Սաֆա
Շ. Սահէյ - Անսար	4:45ին	Մ. Աւան

●ՍՏՈՐԵՒ՝ Բ. դասակարգի ախտաբանության 19րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 3:00ին).

ՀԱՐԱԹ, 15 ՄԱՐՏ	ԴԱՇՏ
Ալի Սալա - Իսլահ	Սուր
Ռիատա Ռալ Ատապ - Նահտա	Թրիփոլի
ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՐՏ	
Հ. Մ. Ը. Մ. - Իժթիսակի	Պ. Համուտ
Հըրրիէ - Հ. Մ. Մ.	Պիամտուն
Ռ-սահիկ - Մահապպա	Ժուսիէ
Շ. Թրիփոլի - Թատ. Նապարիէ	Թրիփոլի

ԼԵԿԱՍ

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՅԱՅՏԱԳԻՐ	ԴԱՇՏ
Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի դաշտին վրայ այս շաբաթավերջին տեղի կ'ունենան ԼԵԿԱՍԻ մինի ֆուտբոլի մրցումները, հետեւեալ յայտագիրով.	
ՀԱՐԱԹ, 15 ՄԱՐՏ	ԺԱՄ
Փոքր - Ս. Չոլիսիմեանց - Ս. Խանամիրեան	2:15ին
Փոքր - Եղիշէ Մանուկեան - Կ. Բ. Վ.	2:45ին
Փոքր - Տեմարեան - Շամլեան-Թաթիկեան	3:15ին
Փոքր - Արգարեան - Ս. Քառասնից Մանկանց	3:45ին
Միջակ - Լ. եւ Ս. Յակոբեան - Շամլեան-Թաթիկեան	4:15ին
Միջակ - Ս. Ազնեւ - Թոնցնոց Բոյն	4:45ին
ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՐՏ	ԺԱՄ
Միջակ - Ս. Ազնեւ - Թոնցնոց Բոյն	1:00ին
Փոքր - Յառաջ - Ս. Ազնեւ	1:30ին
Փոքր - Լ. եւ Ս. Յակոբեան - Թոնցնոց Բոյն	2:00ին

ԼԵՆՆԻ ԵՎ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԶՈՒՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԵՆՆԻ ԵՎ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԶՈՒՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՐԱԹ, 15 ՄԱՐՏ	ԺԱՄ
Փոքր - Ս. Չոլիսիմեանց - Ս. Խանամիրեան	2:15ին
Փոքր - Եղիշէ Մանուկեան - Կ. Բ. Վ.	2:45ին
Փոքր - Տեմարեան - Շամլեան-Թաթիկեան	3:15ին
Փոքր - Արգարեան - Ս. Քառասնից Մանկանց	3:45ին
Միջակ - Լ. եւ Ս. Յակոբեան - Շամլեան-Թաթիկեան	4:15ին
Միջակ - Ս. Ազնեւ - Թոնցնոց Բոյն	4:45ին
ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՐՏ	ԺԱՄ
Միջակ - Ս. Ազնեւ - Թոնցնոց Բոյն	1:00ին
Փոքր - Յառաջ - Ս. Ազնեւ	1:30ին
Փոքր - Լ. եւ Ս. Յակոբեան - Թոնցնոց Բոյն	2:00ին

ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ...

Խօսելով ԵԱՀԿի ու Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի դէմքերու երակացութիւններուն եւ անոնց արձանագրած խախտումներուն մասին, Քոչարեան ըսաւ. «Ես չեմ րսեր, թէ ընտրութիւնները եղած են իտէլական, սակայն այս ընտրութիւնները լաւագոյնս կը ցոյցարկեն հասարակութեան եւ քաղաքական դաշտին վիճակը»: Ան ընդգծեց, որ ջանք պէտք է չէ խնայուի, որ խորհրդարանական յանձնարարութիւնները ըլլան աւելի կազմակերպուած եւ նուազ խախտումներով:

Պատասխանելով լրագրողի մը հարցումին, Ռոպէրթ Քոչարեան յայտնեց, որ Ստեփան Դեմիրճեան ու շաքունով ուղարկած է պետական աշխատանքի ապատարածակուած պաշտօնէաներու ցանկը, աւելցրելով, որ ուր ինքն իր անձնակազմը կը քաղաքացիական ծառայողներ:

Քոչարեան անդրադարձաւ նաեւ խորհրդարանական յանձնարարական ընտրութիւններուն, յատկապէս՝ իրեն աջակցող քաղաքական ուժերուն: Ան նշեց, թէ չի կարծեր, որ այդ ուժերը կը կազմեն միասնական դաշինք մը, որովհետեւ անոնց մէջ կան կայուն կուսակցութիւններ թէ՛ իրենց պատմութեամբ, թէ՛ համակիրներով. սակայն ըստ Քոչարեանի, պէտք է գտնել այնպիսի լուծում մը, որ լաւ արդիւնքներու կ'առաջնորդէ:

ԿՈՒՉՈՒԻ

●Սոսիալական կամ խոհարարի մը հայկական գանձան ձաշէր եփելու համար: Դիմել հեռ. 01 - 255330 եւ 01 - 244330:

ԾԱԽՈՒ ԵՆ

●2 յարկաբաժիններ, Ժեթառուի հիւանդանոցին մօտ, իւրաքանչիւրը 2 մեքանսեմեակ, հիւրասենեակ եւ յարակից մասեր, գետնայարկ եւ Ա. յարկ, մատչելի գին: Հեռ. 03-610854:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Տոքթ. Անդրանիկ Մանուկեանի մահուան առիթով, Լիբանանահայ Բժշկական Միութիւնը 100,000 լ. ո. Չուարթնոց Կեդրոնին:

ԼՕԽԻ ԾՐԱՆԱՆՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱԻԱԲԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

որուն կը մասնակցի
ԼՕԽԻ ՉԵՌԱՐՈՒԵՍԻ ԿԵԴՐՈՆԸ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 18 Մարտ 2003, «Ֆեհիսիա» պանդոկին մէջ, առաւօտեան ժամը 10:00էն կէսօրը ետք ժամը 4:00:

ԱՅՅԵԼԵՅՔ ԵՒ ԲԱԶԱԼԵՐՅՔ Է

ՀՐԱՒԻՐ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՆԹԷՆ ՆԵՐՈՒ...

Շարունակուած 6րդ էջէն

Կայ երկրորդ հարց մը՝ պիտի ստանալու կարելիութեան նահանջը եւ պատճառը յստակ է, աւելի վախճուելու քիմիային հետաձայն մը ստեղծելու մարմնացով տարուած, մասնագետներ անթէնները կը պետեղեն հետաձայնին մէջ, եւ ոչ անոր վրայ: Պարպուած է, որ ներքին անթէնները 15էն 20 առ հարիւր նուազ պարտ են արտաքին անթէններին:

Միւս կողմէ, քիմիային հետաձայններ արտադրող մեծ ընկերութիւններ, որոնց կարգին՝ «Սոնի - Էրիքսոն» միացեալ ընկերութիւնը, կ'ըսեն, թէ ընդհանուր առմամբ իենց նոր արտադրած քիմիային հետաձայնները նախորդ տարբերակներէն ետ չեն մնար որակով եւ նշեցին, թէ արտաքին անթէնները նուազ գործնական են, որովհետեւ անոնք յաճախ կը կոտորին: Սակայն ոչ մէկ ընկերութիւն արժարժեց ներքին եւ արտաքին անթէններու սփռումներ ստանալու համեմատական կարողութեան հարցը:

«Նոքիա», իր կարգին, բացատրեց, թէ ընկերութիւնը ներքին անթէններ սկսած է օգտագործել, որովհետեւ քիմիային հետաձայններու մասին գլխաւոր 10 դժգոհութիւններէն մէկը դիրաբեկ արտաքին անթէններն են:

Այլ ընկերութիւններ, օրինակ՝ ամերիկեան «Վերիպոն Ուայրլըս» ընկերութիւնը, կը մերժեն ներքին անթէններով քիմիային հետաձայններ վաճառել: Ընկերութեան վաճառատուները կը ցուցադրեն «Մոթորոլլա», «Քիոսերա» եւ «Էլ. Ճի.» քիմիայիններու այն տեսակները, որոնք օժտուած են արտաքին անթէններով:

«Վերիպոն»ի բանբերին համաձայն, «թէ անթէններ տեղադրուած են քիմիային հետաձայնի մէջ, անոնք միեւնոյն կարողութիւնը պիտի չունենան: Անթէններու մակերեսը որքան մեծ ըլլայ, անոնք այնքան ապրու կ'ըլլան»:

Ժողովուրդը, իր կարգին, կ'սկսէ օգտագործել արտաքին անթէնով քիմիային «տաղտղակի» հետաձայնը կամ նուազ ապրու ներքին անթէնով հետաձայն մը պիտի ըստին: Գէթ մինչեւ արհեստագիտութեան. կարգացումը առիթ պիտի ընծայէ գեր - հպօր ներքին անթէններ ունենալու...:

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ (Հ. Կ. Հ. Մ.)
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ**

ARARAT

Ֆիլմի շՐՈՅՑ-ՔՆԱՐԿՈՒՄ

Կը ներկայացնէ՝
բեմադրիչ **ՊԵՐՃ ՖԱՂԵԱՆ**

Տեղի կ'ունենայ այսօր՝ Շաբաթ, 15 Մարտ 2003, երեկոյեան ժամը 7:30ին, Չալքայի Ս. Խաչ եկեղեցւոյ «Պետողեան» սրահին մէջ:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՏԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Ելոյթ կ'ունենայ

ՀԱԼԷՊԻ Համազգայինի «Ն. ԱՂԲԱԼԵԱՆ» մասնաճիւղի
ՍԱՐԴԱՐԱՊԱՏ պարախումբը

Պարուսոյց՝ **ՅՈՎԻԿ ԽԱԶԻԿԵԱՆ**
Կազմակերպութեամբ՝
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ՄԻՈՒՈՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 15 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:30ին եւ Կիրակի, 16 Մարտ 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Յ. ՏԵՐ ՍԵԼԵՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Սակ՝ 10,000 եւ 5,000 լիք. ոսկի

Տոմսերը կարելի է ստանալ Տիւրքիոյ Ճեթա, Համազգայինի գրասրահուր «Շաղոյեան» կեդրոն, ՕԵԼԻՃ գրասրահուր՝ Անթիլիաս, Համազգայինի «Լեւոն Ճանք» կեդրոնէն, եւ Ելոյթի օրերը կ'ըլլեն:

ԹՈՒՐԵՒԱ

ՀԱՏԺ ՊԻՏԻ ՀԱԿԱԶԴԵ ԻՐ ԴԵՍ ՏՐՈՒԱԾ ԱՐԳԵԼԵԻՆ

Թուրքիոյ քրպական գլխաւոր կուսակցութիւնը՝ ՀԱՏԺ, երէկ յայտարարած է, թէ իր դէմ կառավարութեան դրամ արգելքին դիմադրելու հակադարձ թայքարելով անոր դէմ: Անկախ նաեւ Անգարան ամբաստանած է Իրաքի դէմ յայտարարած մը զո՞ղ միավախութիւնները շահագործելով՝ քրպական ընդդիմութիւնը ճգնելու համար:

Թուրքիոյ սահմանադրական արեւելքի ինքնուրուի ճիւղերը օր ի նոյապ կառավարութեան մէկ առաջարկին քուէարկած էր՝ արգելելու ՀԱՏԺ-ի գործունէութիւնը ՔԱԿի ըմբոսպնէրու հետ կապերու ամբաստանութեամբ: Նշենք, որ Օձալանի հարցով դարձեալ սկսած են քրպական խլրպումներ, յայտարարելու եւրոպական նորագոյն որոշումին լոյսին պակ:

Մինչ այդ, Մ. Նահանգներ մեղմ «յանդիմանութիւն մը» ուղղած են Թուրքիոյ, ըսելով, թէ Ուշտիկըն ժողովրդավար սկզբունքներու հաւատարմ կուսակցութիւններու փակումը դէմ կը նկատուի միջազգային համայնքին կողմէ ընդունուած ժողովրդավար սկզբունքներուն: Եւրոպական Յանձնաժողովը երէկ խոր մտախոզութիւն յայտնած է, ըսելով, թէ արեւելքի վճիռը Թուրքիոյ վերջերս ձեռնարկած բարեկարգումներու ոգին դէմ է:


ՄԻՏԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ԽԱԿԱԶԴՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԲԱՐՏԵԱՐ ԿՐ ԽՈՍԱՆՆԵՐ ԳՈՒՇ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԸ ԱՆԱՐԳԵԼ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Անցնող երկու օրերուն ընթացքին, իսրայէլեան ուժեր 11 պաղեստինցիներ սպաննեցին Այսրյորդանի մէջ, ուր բանակը կը շարունակէ գործողութիւններ յատկապէս՝ գաղթականներուն դէմ: Պաղեստինեան աղբիւրներ հաղորդեցին, որ Հինգշաբթի Ուրբաթ լուսնոյ գիշերուան ընթացքին իսրայէլեան ուժերը հինգ պաղեստինցիներ սպաննեցին Ժնիւի գաղթականներին մէջ: Իսրայէլեան բանակը հաստատեց, որ գործողութեան մը ընթացքին սպաննած է պաղեստինցի չորս ծայրայեղականներ: Պաղեստինեան աղբիւրները հաղորդեցին, որ Կոհերէն չորսը Իսրայէլեան Ժնիւի հետեւորդներ էին, իսկ մէկը՝ «Արաբի Նահատակներու Փառանգներ»-ը: Հինգ պաղեստինցիներուն յուղարկարութիւնը երէկ յետմիջօրէին կատարուեցաւ Ժնիւի մէջ, հապարտոր պաղեստինցիներու ներկայութեամբ: Ըստ իսրայէլեան բանակին, պաղեստինցի կիներներ կրակ բացած էին գաղթական մտնող կիներներուն վրայ, որոնք հակադարձաբար՝ սպաննելով կիներներ:

ՍԵՐՊԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԴԻՆԴԻՉ ԱՀԱՐԵԿՈՒԵՑԱԻ

Սերպիոյ բարեկարգչական վարչապետ Չորան Ճինճիչի ահաբեկչութեան տարապակայունացման վտանգ դիմագրաւելով, Պելկուտ երէկ կոչ ուղղած է միջազգային համայնքին ուժեղ կերպով պօրափոխ կանգնելու՝ բարեկարգումներու թշնամի ուժերուն դէմ իր պայքարին: Ճինճիչ Չորեքշաբթի օր սպաննուած էր: Սերպիոյ պալատի նախագահ Սերպիոյ քաղաքական եւ տնտեսական բարեկարգումներու «ուղեղ»ը նկատուող անձնատրութեան, երկիրը կրնայ դարձեալ անկայունութեան մէջ մտնելու՝ ապագայականութեան վերակենդանացումով: Սակայն, Պելկուտի մէջ պաշտօնատարներ խոստանալով շարունակել Ճինճիչի բարեկարգչական ուղին, կոչ ուղղած են միջազգային համայնքին միջամտելու եւ երկրին յատկապէս տնտեսութեան օժանդակելու: Ելեւմուտքի նախարար Պոպիտար Ճելիչի հետ տեսակցութեան մը տեք. Ե. Միութեան արտաքին քաղաքականութեան հարցերու պատասխանատու Յաւիէ Սոլանա յայտնած է, թէ Ե. Միութիւնը պիտի օժանդակէ Սերպիոյ «կարելի որեւէ միջոցով»:



Ճինճիչ, որ կը նկատուէր այն «ուղեղ»ը, որ իր երկիրը վերադարձուցած է միջազգային համայնքին, նաեւ պիտի յիշուի իբրեւ այն անձնատրութիւնը, որ հրահանգած էր Սերպիոյ նախկին ղեկավար Սլոպոյան Միլոշեւիչը ՄԱԿի Լա Հէյի ռճրադատատեանին յանձնել Յունիս 2001ին:

Սերպիոյ իշխանութիւնները ահաբեկչութեան կապակցութեամբ մեծ թիւով կասկածելիներ ձեռնարկած են:

Սերպիոյ արտաքին գործոց փոխ նախարար Կեռկի Մամետով տեսակցութիւն մը ունեցած է Մոսկուայի մէջ Իրանի դեսպանին հետ՝ Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի մէկ յայտարարութեան օր մը տեք, թէ Թեհրան «արտասովոր եւ քաղաքակրթական մը» կը ներկայացնէ: Ան վերանորոգած էր պատժամիջոցները, արգիլելով ամերիկեան ընկերութիւններու եւ քաղաքացիներու, որ քարիւղի մարպի մէջ շահարկումներ կատարեն հոն:

Սպիտակ Տուրի եւ ամերիկեան արտաքին գործոց նախարարութիւնը այս շաբաթասկիւբին յայտնած են, որ ամերիկեան մտահոգութիւնները, Իրանի կորիզային ծրագրին գծով արեւել եւս խորացած են նորագոյն տեղեկութիւններին տեք, թէ անոր ճիգերը շատ աւելի յառաջացած են քան ինչ կ'ենթադրուէր նախապէս:

Ռուսիա անտեսած էր այդ մտահոգութիւնները, սակայն կը թուի, թէ Մոսկուայի կեցուածքին մէջ փոփոխութիւն մը արձանագրուած է Թեհրանի այն յայտարարութեան տեք, թէ Ռուսիա Պուշեհի կորիզային հնոցէն գործածուած կորիզային վառելանիւթ կրնայ չլրկել Մոսկուայի: Հնոցը ներկայիս կը կառուցուի ռուս մասնագէտներու կողմէ:

Ռուսիոյ կորիզային ուժանիւթի նախարարութիւնը ամիսներով բանակցութիւններու ձեռնարկած է Իրանի հետ, ապահովելու համար, որ Ռուսիոյ կողմէ յատկացուած վառելանիւթը պիտի վերադարձուի, այսինքն ապահովելու համար, որ Թեհրան պիտի չփորձէ այդ նիւթը փոփոխութեան ենթարկել կորիզային ռուսներու կառուցման համար:

Սակայն Իրան այս ամիս յատկապէս դարձուցած է, թէ կորիզային վառելանիւթը թափօնը ինք առանձին պիտի փոխէ, Ռուսիան նեղ կացութեան մատնելով, մինչ կը շարունակէ արդարացնել կորիզային մարպի մէջ իր գործակցութիւնը՝ երկրի մը հետ, որ Մ. Նահանգներու կողմէ «անսանձ» կը նկատուի:

ՆԱԽԿԻՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ՏՈՔԹ. ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Նական Պլոքի նախկին անդամներ ցաւակցական այցելութիւններ ընդունեցին ժամը 13:00էն 17:00:

Նախարարներ, երեսփոխաններ, նախկին նախարարներ եւ խորհրդարանականներ, կուսակցութեանց ղեկավարներ եւ պատուիրակներ, պետական, կինոտրական բարձրաստիճան պաշտօնատարներ ցաւակցութիւն յայտնեցին Հայկական Երեսփոխանական Պլոքի նախկին անդամին մահուան համար:



Ո՛Վ ԵՐ ՏՈՔԹ. ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ծնած է Խարբերդ-Հիւսէյնիկ 1910ին: Տեղահանութենէն ետք Լիբանան եկած է Նիր Իսթ Բիլիֆի որբերուն հետ եւ նախ Անթիլիաս որբանոց հաստատուած է, եւ ապա՝ յաճախած է Մանչէրու Հայ Աւետ. Բարձր. Վարժարանը, որուն առաջին շրջանաւարտ կարգի անդամներէն եղած է: 1927ին վկայուեցէն ետք, Ամերիկեան համալսարանին մէջ կ'ուսանի բժշկութիւն եւ կ'ատարէ 1935ին (M. D.), ապա՝ Սկոտլանդ Էտինպարայի համալսարանին մէջ Հոգեբանութեան վկայական (D. B. M.) ստացած է 1939ին: Ամուսնացած է Ալիս Խանթաճուրիի հետ, 1944ին. ունի երեք պաւակ: 1941-1946 Բրիտանական Միջին Արեւելքի Ուժերուն հոգեբանական խորհրդականը եղած է: 1956-1982՝ բժշկապետ եւ բժշկական տնօրէնը մտային եւ ջղային հիւանդութեանց Ասֆուրիէի հիւանդանոցին: 1947-1980 Ամերիկեան համալսարանի հոգեբանութեան դասախօս եւ պատուակալ փրոֆեսոր 1980էն ի վեր: 1956-1980 Ամերիկեան համալսարանի հոգեբանութեան բաժանմունքի պետ եւ Արա-

բական բազմաթիւ պետութիւններու մտային առողջապահականութեան խորհրդատու: Ծատ մը միջազգային եւ տեղական բժշկական-հոգեբանական ընկերութիւններու անդամ է: 1972-1992 իբրեւ Աւետարանական Համայնքի պետական Երեսփոխան, անդամ եղած է Լիբանանի խորհրդարանին:

Գործօն մասնակցութիւն բերած է իրական առաջնութեան կենտրոններու անդամ եւ հոգեբանական ծրագրութեան անգարար Միութեան, Արեւելքի Աստուածաբանական ճեմարանի եւ Հայ Անկարներու Կեդրոններուն ինչպէս նաեւ մակալութեան ատենակցութեան: Հիմնադիր եւ նախագահ Լիբանանի Հայ Աւետ. Երիտասարդաց Միութեան, Արեւելքի Աստուածաբանական ճեմարանի եւ Հայ Անկարներու Կեդրոններուն ինչպէս նաեւ մակալութեան ատենակցութեան: Հիմնադիր եւ նախագահ Լիբանանի Հայ Աւետ. Երիտասարդաց Միութեան, Արեւելքի Աստուածաբանական ճեմարանի եւ Հայ Անկարներու Կեդրոններուն ինչպէս նաեւ մակալութեան ատենակցութեան: 1965-1987: 1957-1973

եղած է Հ. Բ. Լ. Միութեան Լիբանանի Շրջանային Յանձնախումբի անդամ եւ վերջին տարիներուն նոյն մարմինին փոխատենակց: Իր ասպարէզին գծով եւ հանրային ծառայութիւններուն համար բարձրօրէն գնահատուած է Լիբանանի պետութեան 1956ին, ստանալով Արժանեաց Ոսկեայ Շքանշան եւ 1970ին Բրիտանիոյ Էլիզապէթ Բ. թագուհին իրեն շնորհած է Բրիտանական Կայսրութեան Կարգի Շքանշանը (OBE): 1993ին Պէյրութի Ամերիկեան համալսարանը պատուած էն կին մետաղեայ Պատուոյ գիրով մը: 2002ին յաջորդաբար ստացած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Կիլիկեան Իշխան» Շքանշանը եւ Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Մեծ Գիտնական-Ուսուցիչներ» Փէնրոյ Պարգեւի Շքանշան:

Հինգ այլ կիներ սպաննուեցան Ժնիւի մտակալ թամու գիւղին մէջ, որ արմատականներու մէկ միջնաբերդը կը նկատուի: Չորեքը Իսրայէլեան Համա շարժումի անդամներ էին: Իսրայէլացի կինուորները յաջողած էին գտնել անոնց թաքստոցը:

Այլ միջազգայ մը տեղի ունեցած էր Հինգշաբթի օր Հեպրոնի մէջ, ուր իսրայէլացի կինուորներ սպաննեցին երկու հրեաներ՝ Կանոնը պաղեստինցի ծայրայեղականներ կարծելով: Բանակը հաղորդեց, որ կինուորները կը պատրաստուէին թակարդի մը մէջ ձգելու ծայրայեղական պաղեստինցիներ, երբ անցած է երկու իսրայէլացիներ փոխադրող ինքնաշարժը, որ թիրախ դարձած է փամփուշտներու տարափի մը:

Իսրայէլեան օրաթերթերը սուր ռճով քննադատեցին բանակին «սխալը» Հեպրոնի մէջ: «Մաարիւ» կը գրէր, որ անցեալին, բանակը օրեր եւ մինչեւ իսկ շաբաթներ պատրաստութիւն կը տեսնէր գործողութիւն մը կատարել տալու: Այսօր սակայն անիկա ճնշումի մատուցելով հապճեպ գործողութիւններու կը ձեռնարկէ, ինչպէս նաեւ թիրիմացութիւններու մէջ, որոնք իսրայէլացիներու կեանքը կը խլեն: Այլ օրաթերթեր եւս դատապարտեցին Հեպրոնի ֆիւսիլը:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Կոլին Փոուելը ցաւ յայտնեց, որ Միջին Արեւելքի խաղաղութեան ճիգերը յառաջիկայը չեն արձանագրեր: Սակայն ան դիտել տուաւ, որ պաղեստինեան իշխանութեան մէջ վարչապետի նշանակումը յուսադրիչ է եւ յատկապէս կը ներշնչէ: Աւելի ուշ, նախագահ Ճորճ Պուշ յայտարարեց, որ Միջին Արեւելքի խաղաղութեան նոր քարտէս մը պիտի հրապարակուի մօտ օրին, երբ պաղեստինեան իշխանութեան վարչապետութեան պաշտօնը ամրապնդուի: Ռուսիա ողջունեց Պուշի այս կեցուածքը:

(ԱՅՓ)

ԴԻՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԱՐԱՏԵՒ ԲԱՆԱՎԵՆԵՐԸ ԵՏԸ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ - ՕԹԱՆ ԱՆԿԻԻՆԱԴԱՐՁԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ



Ռոպրթըրը Եւ Փափանտրելու՝ ստորագրութեան պահուն

Աթէնք, 14 (ԱՅՓ).- Ամիսներու դիւանագիտական բանավեճերէ ետք, Ե. Միութիւնն ու ՕԹԱՆը Ուրբաթ օր քաղաքական անկիւնադարձային համաձայնութիւն մը կնքած են՝ գաղտնի տեղեկութիւններ բաժնեկցելու եւ կարելի դարձնելու, որ եւրոպացիք կիսակցութեան ծրագրումի կարողականութիւնը օգտագործեն: ՕԹԱՆը ընդհանուր քարտուղար Ճորճ Ռոպրթըրը, որ համաձայնագիր կնքած է Աթէնքի մէջ արտաքին գործոց նախարար Ճորճ Փափանտրելուի հետ, յայտնած է, թէ համաձայնագիրը «աւելի քան թեքնիք փաստաթուղթ մըն է»:

Երկու կազմակերպութիւնները, որոնք կը ըսեն, թէ ամէնէն գաղտնի եւ նուրբ տեղեկութիւնները եւ նիւթերը պիտի բաժնեկցին, ցոյց կու տան փոխադարձ վստահութեան այնպիսի մակարդակ մը, որ ցարք բնաւ չէ իրագործուած: Համաձայնագիրը ուղին կը հարթէ Ե. Միութեան, որ ընթացքի մէջ դնէ Մակեդոնիոյ մէջ իր խաղաղարար առաջին գործողութիւնը: Ե. Միութեան շուրջ 300էն 400 ուժեր ամուսան վերջերուն ՕԹԱՆէն պիտի ստանան խաղաղարար նստաքննութիւնը: